

1561

39%

3K23
2-95



Վ. Ի. ԼԵՆԻՆ
Կ. Վ. ԱՏՎՈՂԻՆ

ՀԱՅԿԻՍՅԱՆ
ԴԵՄՈՆՍՏՐԱՑԻԱՆ

343 / 167

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԲՈՒԺ
ՅԵՐԵՎԱՆ • 1929

26 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

14 NOV 2009

Հարմ.

2-3441/

Վ. Ի. Լենին

Ի. Վ. ՍՍԱԼԻՆ

3423

3-85

2-3441

ՀՈՒԼԻՍՅԱՆ ԴԵՄՈՆՕՏՐԱՑԻԱՆ

1917 թ. հուլիսի 3—4 (16—17)

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ԳԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



00.09.2013

7567

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՀԱՅՈՒՆԳՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ԱՅՐԻ ՀԱՅ
ՍԴՅՈՒՅՆԱՐԴՐԱՅԻ



Վ. И. ЛЕНИН
И. В. СТАЛИН

ИЮЛЬСКАЯ ДЕМОНСТРАЦИЯ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Շատ հաճախ եր լինում, վոր յերբ պատմությունը կտրուկ շրջադարձ ե անում, նույնիսկ առաջավոր կուսակցությունները շատ կամ քիչ յերկար ժամանակ չեն կարողանում ընտելանալ նոր գրությանը, կրկնում են յերեկ ճիշտ յեղած լոգունդները, վորոնք, սակայն, այսոր կորցրել են ամեն մի իմաստ, կորցրել են իմաստը նույնքան «Հանկարծակի», վորքան «Հանկարծական» եր յեղել պատմության կտրուկ շրջադարձը:

Նման մի բան կարող են կրկնվել, ըստ յերեսութին, պետական ամբողջ իշխանությունը Խորհուրդներին անցնելու լոգունդի հետ: Այդ լոգունդը ճիշտ եր մեր հեղափոխության, ասենք, փետրվարի 27-ից մինչև հուլիսի 4-ը ժամանակաշրջանի ընթացքում, վոր անդարձ անցել ե: Այդ լոգունդն ակնհայտորեն դադարել ե այժմ ճիշտ լինելուց: Առանց այդ հասկանալու չի կարելի վորեւ բան հասկանալ արդիականության առորյա հարցերից: Յուրաքանչյուր առանձին լոգունդ պետք ե հետեւյլի քաղաքական վորոշ դրության առանձնահատկությունների ամբողջ գումարից: Իսկ Ռուսաստանի քաղաքական դրությունն այժմ, հուլիսի 4-ից հետո, արմասապես տարբերվում ե փետրվարի 27-ից մինչև հուլիսի 4-ը յեղած դրությունից:

Այն ժամանակ, հեղափոխության այդ անցած ժամանակաշրջանում, պետության մեջ տիրում եր այսպես կոչված «յերկիշխանությունը», վորը թե՛ նյութապես և թե՛ ձևա-

կանորեն արտահայտում եր պետական իշխանության անոռոշացողիկ մի վիճակ : Զմոռանանք, վոր իշխության հարցը ամեն մի հեղափոխության արժատական հարցն է :

Այս ժամանությունը տատանվող գրության մեջ եր : Միմյանց հետ հոժարակամ համաձայնություն կայացնելով՝ այդ իշխանությունը բաժին-բաժին եցին անում ժամանակավոր կառավարությունը և Խորհուրդները : Խորհուրդները աղաս, այսինքն՝ զրոց վորեւ բանության չենթարկող զինված բանվորների և զինվորների մասսայի պատմիրակություններն եյին : Զենքը ժողովրդի ձեռքին, ժողովրդի վրա զրոց բանության բացակայություն-ահա վորն եր բանի եյությանը : Ահա ինչն եր բացում և ապահովում ամբողջ հեղափոխության դեպի առաջ զարգանալու խաղաղ ուղին : «Ամբողջ իշխանության անցում Խորհուրդներին» լոգունզը զարդացման այդ խաղաղ ճանապարհին անելիք մերձավորագույն քայլի, անմիջականորեն իրականանալի քայլի լոգունզն եր : Դա լոգունզն եր հեղափոխության խաղաղ զարդացման, վորը փետրվարի 27-ից մինչեւ հունիսի 4-ը հնարավոր եր և, իհարկե, ամենից ավելի ցանկալին, և վորն այժմ անպայման անհնարին է :

Ամենայն հավանականությամբ, «ամբողջ իշխանության անցում Խորհուրդներին» լոգունզի բոլոր կողմնակիցները չե, վոր խելամուտ յեղած լինեն, վոր այդ լոգունզը հեղափոխության դեպի առաջ խաղաղ զարգանալու լոգունզն եր : Խաղաղ վոչ միայն այն իմաստով, վոր վոչ վոք, վոչ մի դաստիարգ, վոչ մի լուրջ ուժ այն ժամանակ (փետրվարի 27-ից մինչեւ հունիսի 4-ը) չեր կարողանա ընդդիմանալ և խանդարել իշխանությունը Խորհուրդներին անցնելուն : Այդ դեռ բոլորը չե : Խաղաղ զարգացումն այն ժամանակ հնարավոր կիներ, նույնիսկ նույնակես այն կողմից, վոր Խորհուրդների ներսում դաստիարգերի ու կուսակցությունների պայքարն այն ժամանակ, պայմանով, վոր իր ժամանակին նրանց անցներ պետական իշխանության լիակատար ամբողջությունը, կարողանար հարատեել ամենից ավելի խաղաղ և ամենից ավելի անցավադին :

Գործի այս վերջին կողմի վրա ևս զեռ անբավարար ուշադրություն և դարձված : Խորհուրդներն, ըստ իրենց դաստիարակյին կազմի, բանվորների և զյուղացիների շարժման որդաններն եյին, նրանց զիկտատուրայի պատրաստի ձեւը : Յեթե լիակատար լիներ նրանց իշխանությունը, մանր-բուրժուական խավերի զվարկոր թերությունը, նրանց զիսավոր մեղքը, վստահությունը դեպի կապիտալիստները, գործնականում կլերանար, կքննադատիներ նրանց սեփական միջոցառումների փորձով : Իշխանություն ունեցող դասակարգերի և կուսակցությունների հերթափոխությունը Խորհուրդների ներսում, նրանց մենիշխանության և ամենազորության հողի վրա, կկարողանար խաղաղ ընթանալ . Խորհրդային բոլոր կուսակցությունների կապը մասսաների հետ կկարողանար ամուր և չթուլացված մնալ : Զի կարելի և վոչ մի բոլիք աչքաթող անել, վոր մասսաների հետ խորհրդային կուսակցությունների այդ ամենասերտ և լայնությամբ ուխորությամբ աղատ ածող կապը կկարողանար ողնել խաղաղ կերպով վերացնելու բուրժուացիայի հետ մանր-բուրժուական համաձայնողականության պատրանքները : Իշխանության անցումը Խորհուրդներին ինքնին չեր փոփոխի և չեր կարողանա փոփոխել դաստիարակցությունը . նա գյուղացիության մանր-բուրժուականության մեջ վոչինչ չեր փոխի : Բայց նա իր ժամանակին խոչոր քայլ կաներ դյուղացիներին բուրժուացիայից պոկելու, նրանց բանվորների հետ մերձեցնելու, իսկ աղա նաև միացնելու կողմը :

Այսպես կարող եր լինել, յեթե իշխանությունը ժամանակին անցներ Խորհուրդներին : Այսպես ամենից ավելի հետ, ամենից ավելի շահավետ կլիներ ժողովրդի համար : Այսպիսի ուղին ամենասանցավագինը կլիներ, ուստի և հարկավոր եր նրա համար ամենից ավելի յեռանդադին պայքարել : Բայց այժմ այդ պայքարը, իշխանությունը Խորհուրդներին ժամանակին անցնելու համար մղված պայքարը, վերջացած է : Զարգացման խաղաղ ճանապարհն անհարին և դարձված : Սկսել է վոչ-խաղաղ, առավել հիմնադաշտին :

Հուլիսի 4-ի բեկման եյությունը հենց այն ե, վոր նրանից հետո որյեկտիվ զբությունը խստ փոխվել ե: Իշխանության տատանավող վիճակը դադարել ե, վճռող տեղում քվամությունն անցել է հակածեղափոխության ձեռքը: Հակածեղափոխական կադետների հետ եսերների և մենչեկների մանր-բուրժուական կուսակցությունների համաձայնողականության հողի վրա կուսակցությունների զարգացումը այն տեղն է հասցըել, վոր այդ յերկու մանր-պուրժուական կուսակցությունները փաստորեն դուրս են յեկել հակածեղափոխական դահճության մասնակիցներ: Մանր բուրժուաների անդիտակից վատահությունը դեպի կապիտալիստները առաջնմերին, կուսակցական պայքարի զարգացման ընթացքով, հասցըել է հակածեղափոխականներին գիտակցությունը ոժանդակելուն: Կուսակցական հարաբերությունների զարգացման ցիկլը վերջացած է: Փետրվարի 27-ին բոլոր զասակարգերը միատեղ գտնվեցին միապետության դեմ: Հուլիսի 4-ից հետո հակածեղափոխական բուրժուական, միապետականների և սեհարյուրյակի հետ ձեռք ձեռքի տված, իրեն միացըեց մանր-բուրժուական եսերներին և մենչեկներին, մասամբ վախեցնելով նրանց, և պետական փաստական իշխանությունը հանձնեց Կավենյակների ձեռքը, զինվորական հրոսակմբի ձեռքը, վորը չհնագաղվովներին գնդակահարում և ուղարձակատում, ջախախում բոլցեկներին Պիտերում:

Իշխանությունը Խորհուրդներին անցնելու ։ Լոդունդն այժմ կհնչեր ինչպես դոնքիշոտություն կամ ինչպես ծագր: Այդ լոգունդն, որյեկտիվություն, կլիներ ժողովրդին խաբել, նրան այն պատրանքը ներշնչել, թե իբր այժմ բավական ե վոր Խորհուրդները ցանկանան վերցնել իշխանությունը կամ այդ վորոշեն իշխանությունն ստանալու համար, իբր Խորհուրդում դեռ կուսակցություններ են գտնվում, վորոնք իբենց չեն արատավորել դահճներին դործակցելով, իբր կարելի յեւ յեղածը դարձնել չեղած:

Ամենախորը սխալ կլիներ մատենել, թթ հեղափոխական պրոլետարիատն ընդունակ ե «Հրաժարվել» աշակցելուց

Եսերներին և մենչեկներին հակածեղափոխության դեմ՝ դրդված, այսպես ասած, «Վլրեժխնդրությունից» դեպի եսերներն ու մենչեկներն այն աջակցության համար, վոր նրանք ցույց տվին բոլցեկների ջախախմանը, գնդակահարումներին ճակատում և բանվորների զինաթափմանը: Հարցի այդպիսի դրումը կլիներ, նախ, սարոյականության վերաբերյալ քաղքենիական հասկացողությունները փոխադրել պրոլետարիատի վրա (վորովհետև գործի ոփակ համար պրոլետարիատը միշտ ել կոժանդակի վոչ միայն տատանվող մանր բուրժուազիային, այլ և խոշոր բուրժուազիային): յերկորդ, —և այդ պահապորն ե, —այդ հարցադրումը կլիներ գործի քաղաքական եյությունը «Քարոյականացման» միջոցով փոխարինելու քաղքենիական փորձ:

Գործի այդ եյությունն այն ե, վոր այժմ արդեն չի կարելի խաղաղ կերպով իշխանություն վերցնել: Այդ իշխանությունն ստանալ կարելի յեւ միմիայն յերբ վհռական կովում հաղթենք տվյալ մոմենտում իսկապես իշխանություն ունեցողներին, հատկապես զինվորական հրոսակերպին, Կավենյակներին, վորոնք հենցում են Պիտեր բերված ունակցիոն զորքերի, կադետների և միապետականների վրա:

Դործի եյությունն այն ե, վոր ողետական իշխանության այդ նոր տիբապետողներին հաղթել կարող են ժողովրդի հեղափոխական մասսաները միայն, վորոնց շարժման պայմանը վոչ միայն այն ե, վոր նրանց պրոլետարիատը դեկալարի, այլև այն, վոր նրանք յերես դարձնեն եսերների և մենչեկների՝ հեղափոխության դործին դավաճանած կուսակցություններից:

Ով քաղաքականության մեջ քաղքենիական բարոյախոսություն և մտցնում, նա այսպես ե դատում: դիցուք թե եսերներն ու մենչեկները «սխալ» են դործել՝ ոժանդակելով Կավենյակներին, վորոնք զինաթափում են պրոլետարիատին և հեղափոխական գնդերը. բայց պետք ե նրանց հնարավորություն տալ «ուղղելու» սխալը, «չդժվարացնել» նրանց «սխալի» ուղղումը. հետաշնել մանր բուրժուազիայի տատանումը բանվորների կողմը: Նման դատողությունը

կլիներ մանկական միամտություն կամ պարզապես հիմա-
ռություն, յեթե վոչ բանվորների հանդես մի նոր խաբեցու-
թյուն։ Վորովհետեւ մանր-բուրժուական մասսաների տատա-
նումը բանվորների կողմը միմիայն կկայանար նրանում, և
հատկապես նրանում, վոր այդ մասսաները յերես կդարձնե-
ցին եսերներից ու մենչեկիներից։ Եսերների և մենչեկիների
կուսակցությունների կողմից «սխալի» ուղղելն այժմ միմի-
այն այն կարող եր լինել, վոր այդ կուսակցությունները
Ծերեթելուն և Զերնովին, Դանին ու Ռակիտնիկովին հայ-
տարարելին գահիների գործակիցներ։ Մենք լիովին ու ան-
պայման կողմանակից ենք սիալն այդպես «ուղղելուն»...

Հեղափոխության արմատական հարցը իշխանության
հարցն ե, ասացինք մենք։ Հարկավոր ե ավելացնել. հենց
հեղափոխություններն են մեզ ամեն քայլափոխին ցույց տա-
լիս այն հարցի մթագնումը, թե վորտեղ ե խսկական իշխա-
նությունը, մեզ ցույց տալիս տարամիտումը ձեւական և
ուեալ իշխանության միջև։ Հենց սրանումն ե ամեն մի հե-
ղափոխական ժամանակաշրջանի զինավոր առանձնահատ-
կություններից մեկը։ 1917 թվականի մարտին և ապրիլին
անհայտ եր, թե ուեալ իշխանությունը կառավարության
ձեռքին եր արդյոք, թե Խորհրդի ձեռքին։

Իսկ այժմ առանձնամես կարենոր ե, վոր գիտակից բան-
վորները զգացած նային հեղափոխության արմատական հար-
ցին՝ թե տվյալ մոմենտում ում ձեռքին ե պետական իշխա-
նությունը։ Մտածեցե՞ք, թե վորոնք են նրա նյութական
դրսերումները, Փրազները գործերի տեղ մի՛ ընդունեք, և
դուք չեք դժվարանա պատասխանը տալու։

Պետությունն ամենից առաջ զինված մարդկանց ջոկատ-
ներն են՝ բանտերի նման նյութական հավելվածներով—
գրում եր Ֆրիդրիխ Ենդելու։ Այժմ այդ՝ յունկերներն են,
ուեակցիոն կազակները, վորոնք հատկապես բերված են Պի-
տեր. այդ նրանք են, ովքեր բանտումն են պահում կամե-
նեին և ուրիշներին. ով փակել ե «Правда» թերթը. ով դի-
նաթափել ե բանվորներին և զինվորների վորոշ մասը. ով
դնդակահարում ե զինվորների նույնքան վարոշ մասը, ով

գնդակահարում ե զորքի նույնքան վորոշ մասը բանակում։
Ահա այդ դահիճները, զա ուեալ իշխանություն ե։ Ծերե-
թելիներն ու Զերնովները մինիստրներ են առանց իշխանու-
թյան, խաղալիք մինիստրներ, դահճությանը ոժանդակող
կուսակցությունների առաջնորդներ։ Դա փաստ է։ Յեվ այդ
փաստը չի փոխվում նրանից, վոր վոչ Ծերեթելին, վոչ ել
Զերնովն անձամբ, յերեկի «հավանություն չեն տալիս» դահ-
ճությանը, վոր նրանց լրագրերը յերկչոտությամբ հա-
ժարվում են նրանից. քաղաքական զգեստի այդպիսի կեր-
պարանափոխությունը գործի եյությունը չի փոխում։

Պետրովրադի 150·000 ընտրողների որդանը փակելը,
տպարանից «Լիստոկ Պրավդա»-ն գուրաքելու համար բան-
վոր Վոյնովի սպանությունը (հուլիսի 6-ին) յունկերների
ձեռքով—մի՞թե այդ դահճություն չե. մի՞թե դա Կավե-
նյակների գործ չե։ Վո՛չ կառավարությունը, վո՛չ ել Խոր-
հուրգները դրանում «մեղավոր չեն», —կասեն մեզ։

Այնքան ավելի վատ կառավարության և Խորհուրդների
համար, —կապատասխաննենք մենք, —վորովհետեւ այն ժամա-
նակ, կնշանակի, նրանք զերոներ են, նրանք տիկնիկներ են,
ուեալ իշխանությունը նրանց ձեռքին չե։

Ժողովուրդը պետք ե ամենից առաջ և ամենից շատ
նշանաբար իմանա—իմանա, թե Հապա ո՛ւմ ձեռքին ե
իրոք պետական իշխանությունը։ Ժողովրդին հարկավոր ե
ասել ամբողջ ձշմարտությունը. իշխանությունը կավե-
նյակների զինվորական կլիկի ձեռքին ե (կերենսկու, ինչ-վոր
գեներալների, սպաների և այլն), վորոնց ոժանդակում ե
բուրժուազիան իրեն դասակարգ, զլուխ ունենալով կադետնե-
րի կուսակցությունը, բոլոր միապետականների հետ մեկենա,
վորոնք գործում են բոլոր ուևարյուրյակային թերթերի,
«Новое Время»-ի, «Живое СЛОВО»-ի միջոցով և այլն
և այլն։

Այդ իշխանությունը հարկավոր ե տաղալել։ Առանց
դրան՝ հակահեղափոխության դեմ պայքարելու մասին աս-
ված բոլոր Փրազները դատարկ Փրազներ են, «ինքնախարե-
յություն և ժողովրդին խարել»։

Այդ թշնանությանն այժմ ոժանդակում են թե Ծերի-
թելի ու Զերնով մինիստրմերը և թե նրանց կուսակցու-
թյունները. հարկավոր և ժողովրդին պարզաբանել նրանց
դաշճական դերը և այդ կուսակցությունների այլպիսի
«Փինալի» անխուսափելիությունը ապրիլի 21-ի, մայիսի
5-ի, հունիսի 9-ի, հուլիսի 4-ի նրանց «սխալներից» հետո,
այն բանից հետո, յերբ նրանք հավանություն են տալիս
հարձակման քաղաքականությանը, մի քաղաքականության,
վոր իննը տասերորդով նախորոշել և Կալենյակների հաղ-
թանակը հուլիսին:

Ժողովրդի մեջ ամբողջ ազիտացիան հարկավոր և այն-
պես վերակառուցել, վոր նա հաշվի առնի հենց այժմյան
հեղափոխության և մանավանդ հուլիսյան որերի կոնկրետ
փորձը, այսինքն՝ վոր նա պարզ ցույց տա ժողովրդի իսկա-
կան թշնամուն, զինվորական կլիկին, կաղետներին և ուժա-
րյուրյակայիններին, և վոր նա վորոշակի մերկացնի այն
մանր-բուրժուական կուսակցությունները, եսերների և մեն-
շմիկների կուսակցությունները, վորոնք խաղացել և խա-
ղում են դահճության գործակիցների դեր:

Ժողովրդի մեջ ամբողջ ազիտացիան հարկավոր և այն-
պես վերակառուցել, վոր պարզվի գյուղացիների՝ հող ստա-
նալու լիակատար անհուսալիությունը, քանի դեռ չի տա-
պալված զինվորական կլիկի թշնանությունը, քանի դեռ
մերկացված և ժողովրդի. վստահությունից զրկված չեն
եսերների ու մենչեկների կուսակցությունները: Կապիտա-
լիստական զարդացման «նորմալ» պայմաններում դա կլիներ
շատ յերկար և շատ դժվար մի պրօցես, բայց թե պատե-
րազմը և թե տնտեսական փլուզումը գործը կարապացնեն
հսկայական չափերով: Դրանք այնպիսի «արագացնողներ»
են, վորոնք ամիսը և նույնիսկ շաբաթը կարող են տարու
հավասարեցնել:

Հավանական ե, վոր վերը ասվածի դեմ յերկու առար-
կություն բերվի. առաջինը, վոր այժմ խոսել վճռական
պայքարի մասին՝ նշանակում և քաջալերել անշատ-անշատ
յելույթները, վորոնք հենց հակահեղափոխությանը կողմե-

յին. յերկրորդ, վոր նրա տապալումը նշանակում է իշխա-
նության անցում այնուամենայնիվ Խորհուրդների ձեռքը:

Առաջին առարկությանն իրեւ պատասխան կասենք. Ռուսաստանի բանվորներն արդեն բավականաչափ դիտակից
են՝ իրենց համար հայտնապես անձեռնոտու մի մոմենտում
պրովոկացիայի չենթարկվելու համար: Վոր այժմ յերտիթ
ունենալը և նրանց դիմադրելը կնշանակեր ոդնել հակահե-
ղափոխությանը, դա անվիճելի յե: Վոր վճռական պայքարը
հնարապիոր և ամենախոր մասսաների մեջ հեղափոխության
մի նոր վերելքի ժամանակ միայն, այդ նույնպես անվի-
ճելի յե: Բայց բավական չե հեղափոխության վերելքի ժա-
մանին, նրա մակընթացության մասին, արևմտյան բանվորնե-
րի ոդնության մասին և այլն առհասարակ խոսելը, հարկա-
վոր և վորոշ հետեւություն անել մեր անցյալից, հարկավոր
և հաշվի առնել հենց մեր դասերը: Իսկ այդ հաշվառումը
կտա հենց իշխանություննը հափշտակած հակահեղափոխու-
թյան գեմ վճռական պայքար մղելու լոգունը:

Յերկրորդ առարկությունը նույնպես հանգում և կոն-
կրետ ծշմարտություններով չափից գուրս ընդհանուր դա-
տողություններով նենդափոխելուն: Վոչինչ, վոչ մի ուժ,
բացի հեղափոխական պրոլետարիատից, չի կարող տալ
բուրժուական հակահեղափոխության տապալում: Հենց հե-
ղափոխական պրոլետարիատն և, վոր, 1917 թվականի հու-
լիսի փորձից հետո, պետք և ինքնուրույն կերպով իր ձեռքը
վերցնի պետական իշխանությունը—դրանից գուրս հեղափո-
խության հաղթություն չի կարող լինել: Իշխանությունը
պրոլետարիատի ձեռքին, ոժանդակություն նրան չքավորա-
գույն գյուղացիության կամ կիսապրոլետարների կողմից,—
ահա միակ յելքը, և մենք արդեն պատասխանեցինք, թե
հատկապես ինչ հանդամանքներ կարող են չափազանց արա-
գացնել այն:

Այդ նոր հեղափոխության մեջ Խորհուրդները կարող են
և պետք ե յերեան դան, բայց վոչ այժմյան Խորհուրդները,
վոչ բուրժուակայի հետ համաձայնողականության որպան-
ները, այլ նրա դեմ հեղափոխականորեն պայքարելու որ-

գանները : Այս մենք այն ժամանակ ել կողմնակից կմինենք ամբողջ պետությունը Խորհուրդների տիպով կառուցելուն, այդ այլպիս ե : Դա Խորհուրդների հարց չե ընդհանրապես, այլ տվյալ հակածեղափոխության դեմ և տվյալ Խորհուրդների դավաճանության դեմ պայքարելու հարց :

Կոնկրետը արսարակտով նենդափոխելը ամենապլիակտը մեղքերից, ամենալավունդափոր մեղքերից մեկն և հեղափոխության մեջ : Տվյալ Խորհուրդները ձախողվեցին, լիակատար կրախ կրցցին իրենց մեջ եսերների և մենշերիների կուսակցությունների տիրապետության պատճառով : Տվյալ բոլորներն այդ Խորհուրդները նման են վոչխարների, վորոնք սպանդանոց են բերված, դրված են կացնի տակ և աղիոզը մայում են : Խորհուրդներն այծմ անգոր ու անողնական են հաղթանակած և հաղթանակող հակածեղափոխության առջև : Իշխանությունը Խորհուրդներին հանձնելու լողունդը կարող է հասկացվել վորպես իշխանությունը հենց տվյալ Խորհուրդներին անցնելու «պարզ» կոչ, իսկ այդ անը, դեռև այդ կոչել՝ այժմ կնշանակեր խաբել ժողովրդին : Խարբեցությունից ավելի վտանդալոր բան չկա :

Ուստաստանում դասակարգավին և կուսակցական պայքարի՝ վետրվարի 27-ից մինչև հուլիսի 4-ը զարգանալու ցիկլը վերջացավ : Սկսվում է մի նոր ցիկլ, վորի մեջ մըսնում են վոչ թե հին դասակարգերը, վոչ թե հին կուսակցությունները, վոչ թե հին Խորհուրդները, այլ պայքարի կրակով վերանորոգվածները, պայքարի ընթացքով կուիլածները, սովորածները, վերաստեղծվածները : Հարկավոր և վոչ թե հիտ, այլ առաջ նայել : Հարկավոր և գործել վոչ թե հին, այլ նոր, հետհույսայն, դասակարգավին ու կուսակցական կատեգորիաներով : Նոր ցիկլի սկզբում հարկավոր և յելնել հաղթանակած բուրժուական հակածեղափոխությունից, վորը հաղթանակել և իր հետ եսերների ու մենշերիների համաձայնելու չնորհիվ և կարող է պարտվել միմիայն հեղափոխական պրոլետարիատից : Այդ նոր ցիկլի մեջ, իշարին, բազմազան ետապներ դեռ կլինեն թե մինչև հակածեղափոխության վերջնական հաղթանակը, թե մինչև եսերների ու

մենշերիների վերջնական պարտությունը (առանց պայքարի) և թե մինչև նոր հեղափոխության նոր վերելքը : Սակայն այդ մասին կարելի խոսել միայն ավելի ուշ, յերբ կնշվեն այդ ետապներն առանձին...

Գրված է 1917 թ. հուլիսի կեսերին :

Տպագրված և առանձին բրոշյուրով 1917 թ. :
Ռ.Ռ.-Դ.Բ.Կ. Կրսնշատարի կոմիտեյի հրատարակությամբ,
Յերկիր, և. XXI, հջ 33—33, 2-րդ և 3-րդ հրատ. :

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻԼՅՈՒԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սահմանադրական իլյուզիաներ ե կոչվում քաղաքական այն սխալը, վոր ժարդիկ ընդունում են իրեն գոյություն ունեցող նորմալ իրավական կարգախորհած, որենքին յենթակա, կարծ՝ «սահմանադրական» կարդ, թեպետ իրականության մեջ նա դրյություն չունի: Առաջին հայացքից կարող ե թվալ, վոր ժամանակակից Ռուսաստանում, 1917 թվի հունիսին, յերբ վոչ մի սահմանադրություն դեռ չի ժակված, սահմանադրական իլյուզիաների առաջացման մասին խոսք անդամ չի կարող լինել: Բայց դա—խորը սխալ է: Խոկապես Ռուսաստանի վողջ ժամանակակից քաղաքական գրության ամբողջ մեջն այն ե, վոր ընակչության չափաղանց լայն մասսաները համակված են սահմանադրական իլյուզիաներով: Հասուկանալով այս, Ռուսաստանի ժամանակակից քաղաքական գրությունից բոլորովին վոչինչ չի կարելի հասկանալ: Ժամանակակից Ռուսաստանում տակտիկական ինուիրոների ծիստ դրման ուղղությամբ ամենելին չի կարելի մի քայլ անդամ անել, չզնելով անկյունաշղվանում սահմանադրական իլյուզիաների սխոտեմատիկ և անողոք մերկացումը, նրանց բոլոր արմատների բացումը, ճիշտ քաղաքական հեռանկարի վերականգնումը:

Վերցնենք ժամանակակից սահմանադրական իլյուզիաների համար ամենից ավելի տիպիկ յերեք կարծիքները և դրանք քնննենք ավելի ուշադիր:

Առաջին կարծիք. մեր յերկիրն ապրում է Սահմանադրի

Փողովի նախորյացիք. այդ պատճառով այժմ տեղի ունեցող ամեն ինչ ունի ժամանակավոր, անցողիկ, վոչ շատ եյական, վոչ վճռողական բնույթ, ամեն ինչ չուտով կիրանայի ու վերջնականապես կհաստատվի Սահմանադրի ժողովի կողմից: Յերկրորդ կարծիք. վորոշ կուսակցություններ,—որինակ, եսերները կամ մենչեւիները և կամ նրանց միությունը,—ունեն բացահայտ ու անկառածելի մեծամասնություն ժողովրդի մեջ կամ Խորհուրդների նման «ամենաազդեցիկ» հիմնարկներում, ուստի այդ կուսակցությունների, այդ հիմնարկների, ինչպես և ընդհանրապես ժողովրդի մեծամասնության կամքը չի կարող զանց առնըլի, կամ մանավանդ խախունի հանրապետական, դեմոկրատական, հեղափոխական Ռուսաստանում: Յերրորդ կարծիք. վորոշ միջոցը, որինակ, «Պրավда» լրագրի փակումը, որինականացված չե, վոչ ֆամանակավոր կառավարության, վոչ ել Խորհուրդների կողմից: Դրա համար ել նա հանդիսանում է լոկ մի միջադեպ, պատահական մի յերեսությ, նա վոչ մի կերպ չի կարող դիտվել վորպես ինչ-վոր վճռողական մի բան:

Անցնենք այդ կարծիքներից ամեն մեկի քննարկմանը:

I

Սահմանադրի Փողովի հբավիրումը խոստացված ե դեռ ժամանակավոր կառավարության առաջին կազմի կողմից: Նա իր զվիսավոր խնդիրը ճանաչեց յերկիրը հասցնել մինչև Սահմանադրի Փողովը: Ժամանակավոր կառավարությունը յերկրորդ կազմի Սահմանադրի Փողովի հբավիրման ժամանակակից սեպտեմբերի 30-ը: Ժամանակավոր կառավարությունը յերրորդ կազմի, հուլիսի 4-ից հետո, ամենահանդիսավոր կերպով հաստատեց այդ ժամկետը:

Այնինչ 100-ից 99 շանսը հոգուտ այն բանի յե, վոր այդ ժամկետին Սահմանադրի Փողովը չի հբավիրվի: Յեթե անպատ այն հբավիրվի այդ ժամկետին, այնուամենայնիվ հարյուրից 99-ը շանսը հոգուտ այն բանի յե, վոր նա կլինի նույնքան

անզոր ու անպետք, ինչպես առաջին Դաւման, մինչև վոր չհաղթի յերկրորդ հեղափոխությունը Ռուսաստանում: Վորպետի գրանում համազվենք, բաժական և գեթ մի բոսկ վերանալ Փրազների, խօսումների և որվա մանրանքների այն ազմուկից, վորն աղոտում և ուղեղները, և նայել հիմնականին, հասարակական կյանքում ամեն բան վորոշողին՝ դասակարդային պայքարին:

Վոր Ռուսաստանում բուրժուազիան ամենաերա կերպով ձուլվել է կարվածառաքերի հետ, այդ պարզ է: Ամբողջ մամուլը, բոլոր ընտրությունները, կաղեաների կուսակցություն և նրանցից ավելի աջ կուսակցությունների ամբողջ քաղաքականությունը, «Համագործակցած» անձերի «համագործարների» բոլոր յելայիններն ապացուցում են այդ:

Բուրժուազիան հրաշալի յե հասկանում այն, ինչ չեն հասկանում եւերների և «Ճախ» մենշևիկների մանր-բուրժուական չաղականները, այսինքն, վոր Ռուսաստանում չի կարելի վերտցնել հողի մասնավոր սեփականությունը և այն ել առանց հետզեման, առանց հսկայական անտեսական հեղափոխության, առանց բանկերը համաժողովրդական վերահսկության տակ առնելու, առանց օթնդիկաւաներն աղդանացնելու, առանց կապիտալի գեմ ուղղված մի շարք ամենաանազոք հեղափոխական միջոցների: Բուրժուազիան հիմնալի յե հասկանում այս: Յեկ միմնույն ժամանակ նա չի կարսկ չիմանալ, չտեսնել, չզդալ, վոր Ռուսաստանում դրուզացիության հսկայական մեծամասնությունն այժմ վոչ միայն կարտահայտի հոգուա կարվածառիրական հողերի բռնազբալման, այլև գուրս կզա Զերնովիլ նշանակալիորեն ավելի ձախ: Վորովհետեւ բուրժուազիան մեզանից շատ դիտե, ինչպես այն մասին, թե վորքան մասնակի փոքրիկ զիջումներ եր անում նա, Զերնովը, թեկուղ մայիսի 6-ից մինչև հուլիսի 2-ը՝ գյուղացիական զանազան պահանջների ձգձման ու պահանջման հարցերում, նույնպես և այն մասին, թե զորքան աշխատանք թափեցին աջ նոերները (չե վոր Զերնովն ես-երների մոտ համարվում ե «կենացույց») դրուզացիական համագործարում և դյուզացիական

պատշաճավորների Համառուսական Խորհրդի Գործադիր կոմիտեյում «Հանդստացներու» դյուզացիներին և նրանց խարութիկ խօսուումներով կերպելու համար:

Բուրժուազիան տարբերվում է մանր բուրժուազիայից նրանով, վոր նա իր տնտեսական ու քաղաքական փորձից ձեռք է բերել կապիտալիստական կարգերում «կարգի» (այսինքն մասսաների սորկացման) պահպանման մայժման-ների ըմբռնումը: Բուրժուաները գործարար մարդիկ են, խոշոր առևտրական հաշվարկի մարդիկ, վորոնք սովոր են քաղաքականության հարցերին ել խիստ գործնական ձեռք մտանալու, անվատահությամբ դեպի խոսքերը, յեզին պողերից բռնկելու հմտությամբ:

Ժամանակակից Ռուսաստանում Սահմանադիր Ժողովը մեծամասնությունը կտա ես-երներից ավելի ձախ գյուզացիներին: Այս բանը բուրժուազիան գիտե: Իմանալով այս, նա չի կարող ամենապհճուական ձեռվ չպայքարել Սահմանադիր Ժողովը շուտ հրավիրելու դեմ: Իմպերիալիստական պատերազմ մղել Նիկոլայ II-ի կողմից կնքված զաղտնի պայմանագրերի վոգով, պաշտպանել կարվածատիրական հողատիրությունը կամ հետզնումը, այս ամենը անհնարին կամ բուրժուազիությունը դժվար գործ և Սահմանադիր Ժողովի ժամանակ: Պատերազմը չի սպասում: Դասակարգային պայքարը չի սպասում: Նույնիսկ վետրվարի 28-ից մինչև ապրիլի 21-ն ընկած կարճ ժամանակամիջոցը ակներն կերպով ցույց տվեց այդ:

Հեղափոխության հենց սկզբից Սահմանադիր Ժողովի նկատմամբ ուրժադիրներ յերկու հայացքներ: Եսերներն ու մենշևիկներն, ամբողջովին տողորոշած լինելով սահմանադրական իլյուզիաներով, գործին նայում եյին մանր բուրժուայի դյուրահավատությամբ, վորը չի ցանկանում իմանալ գառակարգային պայքարը. Սահմանադիր Ժողովը հոչակված ե, Սահմանադիր Ժողովը կլինի, և բավակա՞ն է: Ինչ ավելի յե գրանից, այն սատանայից ե: Իսկ բոլշևիկներն առում եյին. միայն Խորհուրդների ուժի ու իշխանության ամբազնդման չափով և Սահմանադիր Ժողովի հրավիրումն

ու նրա հաջողությունն ապահովված։ Մենչեւիների ու եսերների մոտ ծանրության կենտրոնը փոխադրվում էր իրավաբանական ակտի վրա—Սահմանադիր ժողովի հրավիրման հռչակում, խոստում, պաշտոնական հայտարարում։ Բոլչեմիների մոտ ծանրության կետրոնը փոխադրվում էր դասակարգային պայքարի վրա։ յեթե Խորհուրդները հաղթեն Սահմանադիր ժողովը ապահովված կլինի, յեթե վոչ, այն ապահովված չեւ։

Այդպիս եւ յեղավ։ Բուրժուազիան ամբողջ ժամանակ, մերթ քողարկված, մերթ բացահայտ, մերթ անընդհատ, անշեղ պայքար եր մզում Սահմանադիր ժողովի հրավիրման դեմ։ Այդ պայքարն արտահայտվում եր նրա հրավիրումը մինչև պատերազմի վերջանալը ձգձղելու ցանկությումք։ Այդ պայքարն արտահայտվում եր Սահմանադիր ժողովի հրավիրման նշանակված ժամկետի մի շարք ձգձղումներով։ Վերջապես, յերբ հունիսի 18-ից հետո, կոտրցիոն մինիստրություն կազմվելուց հետո մի ամսից ավելի անց, նշանակվեց Սահմանադիր ժողովի հրավիրման ժամկետը, Մոսկվայի բուրժուազիան լրադիրությունը հայտարարեց, վոր այդ արված ե բոլչեմիների ազիտացիայի ազդեցության տակ։ «Պարտ»-յում բերվեց ստույգ ցիտատն այդ լրագրից։

Հուլիսի 4-ից հետո, յերբ ես-երների ու մենչեւիների ծառայակամությունն ու ահաբեկվածությունը «Հաղթություն» տվեց հակահեղափոխությանը, «Речь»-ում յերեաց կարճ, բայց վերին սատիթանի ուշադրավ մի արտահայտություն։ «Հնարավոր ե» Սահմանադիր ժողովի «արագ» գումարում։ Իսկ հուլիսի 16-ին «Воля Народа»-յում և «Русская Воля»-յում յերեւմ ե մի դիտողություն, վոր կազմուները պահանջում են Սահմանադիր ժողովի հրավիրումը հետաձգել՝ այն այդպիսի «կարճ» ժամկետում հրավիրելու «անհնարինության» պատրվակով, և հակահեղափոխության առաջ լակեցություն անող մենշեկի Ծերեթելին, համաձայն այդ դիտողության, արդեն համաձայնվում ե մինչև նոյնիմբերի 20-ը հետաձգելուն։

Կասկած չկա, վոր նման դիտողություն կարող եր յե-

րեալ միայն բուրժուազիայի կամքին հակառակ։ Նրան ձեռնատու չեն այսպիսի «մերկացումներ»։ Սակայն մախաթը տոպրակի մեջ չես կարող թաղյնել։ Հուլիսի 4-ից հետո սանձարձակ հակահեղափոխությունը շարժվում ե։ Հակահեղափոխական բուրժուազիայի կողմից հուլիսի 4-ից հետո իշխանության առաջին խոկ գրավումն անմիջապես ուղեկցվում ե մի քայլով (և շատ լուրջ քայլով) ընդդեմ Սահմանադիր ժողովի հրավիրման։

Դա փաստ ե։ Յեկայտ այդ փաստը բաց ե անում սահմանադրական իլյուզիաների ամբողջ դատարկությունը։ Յուսատանում առանց նոր հեղափոխության, առանց հակահեղափոխական բուրժուազիայի (առաջին հերթին կաղեաների) իշխանության առաջարձան, առանց ժողովրդի կողմից եսերների ու մենչեւիների կուսակցությունների նկատմամբ, բուրժուազիայի հետ համաձայնության յեկող կուսակցությունների նկատմամբ ունեցած վատահությունից հրաժարվելու, Սահմանադիր ժողովը կամ ամենենին չի գումարվի, կամ կլինի «Փրանկփուրտյան խոսարան»։ մանր բուրժուաների անզոր, անպետք մի ժողով, մանր բուրժուաներ, վորոնք մահու չափ ահաբեկված են պատերազմից և բուրժուազիայի կողմից «իշխանության բոյկոտի» հեռանկարից, վորոնք անողնական կերպով այս ու այն կողմ են նետվում առանց բուրժուազիայի կառավարելու ծիդերի և առանց բուրժուազիայի յոլա գնալու յերկյուղի միջև։

Հիմնադիր ժողովի հարցը յենթարկված և բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև մզկող պայքարի ընթացքի ու յելքի հարցին։ Հիշում եմ, մի անգամ «Рабочая Газета»-ն բերնից թոցքեց, թե Սահմանադիր ժողովը կլինի կոնվենտ։ Սա հակահեղափոխական բուրժուազիայի մեր մենչեւիկյան լակեյների դատարկ, խղճուկ, անարդ պարծենկոտության նմուշներից մեկն և։ «Փրանկփուրտյան խոսարան» կամ Առաջին Դումա ըլինելու համար, կոնվենտ լինելու համար, պետք և համարձակվել, կարողանալ, ուժ ունենալ հակահեղափոխության անինատ հարվածներ հասցնելու և վոչ թե համաձայնության գալու նրա հետ։ Դրա համար հարկավոր

ե, վոր իշխանությունը լինի տվյալ դարաշրջանի համար ամենաառաջավոր, ամենավճռական, ամենահեղափոխական դասակարգի ձեռքում: Դրա համար հարկավոր ե, վոր նա պաշտպանություն դանի քաղաքային ու դյուղական չքավորության (կիսապղողետարների) ամբողջ մասսայի կողմից: Դրա համար հարկավոր ե անողոք դատաստան տեսնել հակածեղափոխական բուրժուազիայի հետ ամենից առաջ, այսինքն կադետների և բանակի հրամանատարական վերնախավերի հետ ամենից առաջ: Սրանք են կոնվենտի ռեալ, դասակարգային, նյութական պայմանները: Բավական ե ստույգ ու պարզորոշ թվարկել այս պայմանները՝ հասկանալու, համար, թե ինչպես ծիծաղելի յե «Рабочая Газета»-ի պարծենկուությունը, թե ինչպես անհուորեն հիմար են եսերների ու մենշևիկների սահմանադրական իլյուդիաները ժամանակակից Ռուսաստանի Սահմանադիր Ժողովի վերաբերյալ:

II

Խարազանելով 1848 թվականի մանր-բուրժուական «սոցիալ-դեմոկրատներին», Մարքսն առանձնապես խստորեն նշավակում էր նրանց անզուսպ Փրազյորությունը «ժողովրդի» և ժողովրդի մեծամասնության նկատմամբ ընդհանրապես: Հատկապես տեղին ե այդ հիշել յերկրորդ կարծիքը քննելիս «մեծամասնության» նկատմամբ յեղած սահմանադրական իլյուդիաների վերլուծման ժամանակ:

Վորպետի մեծամասնությունն իրոք վորոշի պետության մեջ, դրա համար հարկավոր են վորոշ ռեալ պայմաններ: Այն ե՝ պետք ե պարզապես հաստատվի պետական այնպիսի կարգ, պետական այնպիսի իշխանություն, վորք հնարավորություն տար գործերը վորոշելու ըստ մեծամասնության և ապահովեր այդ հնարավորության փոխարկումն իրականության: Այս մի կողմից: Մյուս կողմից, անհամացնետ ե, վոր այդ մեծամասնությունն իր դասակարգային կազմով, մեծամասնության ներսում (և նրանից դուրս) յե-

ղած այս կամ այն դասակարգերի հարաբերակցությամբ կարողանաւ համերաշխ ու հաջողակ կերպով վարել պետական կառաջը: Յուրաքանչյուր մարքսիստի համար պարզ ե, վոր այդ յերկու ռեալ պայմանները վճռողական դեր են խաղում ժողովրդի մեծամասնության վերաբերյալ և պետական գործերի ընթացքի վերաբերյալ հարցում, համաձայն այդ մեծամասնության կամքի: Այնինչ եսերների ու մենշևիկների վողջ քաղաքական գրականությունը, իսկ առավել ևս նրանց ամբողջ քաղաքական վարքադիճը դրամորում և այս պայմանների ամենալիականացողություն:

Եեթե պետության մեջ քաղաքական իշխանությունը պանվում և այնպիսի դասակարգի ձեռքին, վորի շահերը համընկնում են մեծամասնության շահերին, այն ժամանակ ուսուության կառավարումն իրոք մեծամասնության կամքի համաձայն հնարավոր ե:

Իսկ յեթե քաղաքական իշխանությունը գտնվում է մի դասակարգի ձեռքին, վորի շահերը բաժանվում են մեծամասնության շահերից, այն ժամանակ ամեն մի կառավարում ըստ մեծամասնության անխուսափելիորեն վոխարկվում ե այդ մեծամասնության խարբան կամ ճնշման: Յուրաքանչյուր բուրժուական հանրապետություն մեջ ցույց է տալիս դրա հարցուրավոր ու հաղարավոր որինակներ: Բուժսաստանում բուրժուազիան տիրապետում է թե՛ տնտեսապես և թե՛ քաղաքականապես: Նրա շահերը, առանձնապես իմպերիալիստական պատերազմի ժամանակ, ամենալիստ կերպով բաժանվում են մեծամասնության շահերից: Դրա համար ել հարցի ամբողջ մեխը, նրա մատերիալիստական, մարքսիստական և վոչ թե ֆորմալ-իրավաբանական դրամակելքում, կայանում ե այդ բաժանումը մերկացնելու, բուժուազիայի կողմից մասսաներին խարելու դեմ պայքար մղելու մեջ:

Մեր ես-երներն ու մենշևիկներն, ընդհակառակն, լիովին ապացուցեցին ու ցույց տվին իրենց իսկական դերը, վորպես բուրժուազիայի կողմից մասսաներին («մեծամասնությանը») խարելու գործիքի, վորպես այդպիսի խարեյու-

թյան հաղորդիչների ու սժանողակիչների: Վորքան ել անկեղծ վնեն և երների ու մենչելիների առանձին անձնավորությունները, նրանց հիմնական քաղաքական իդեաները—իր կարելի յե գուրս պլրծնել իմպերիալիստական պատերազմից դեպի «Հաշոտություն առանց անննջաների ու կոնտրիբուցիաների», առանց պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիզմի հաղթանակի, իր հնարավոր և հողի անցումը ժողովրդին առանց հետզնման և «վերահսկողությունն» արտադրության վրա հոգուտ ժողովրդի առանց նույն այդ պայմանի, —ևս-երների ու մենչելիների այս հիմնական քաղաքական (և տնտեսական, իհարկե) իդեաներն իրենցից որյեկտիվորեն ներկայացնում են հենց մանր-բուրժուական ինքնախարեյություն, կամ նույն և թե, մասսաներին («մեծամասնության») խարելը բուրժուազիայի կողմից:

Ահա մեր առաջին և զվարավոր «ուղղումը» մեծամասնության հարցի դրման վերաբերյալ մանր-բուրժուական դեմոկրատաների, լուիբրլանցան տիտի սոցիալիստների, եռերների ու մենչելիների կողմից. Ի՞նչ արժե իրականում «մեծամասնությունը», յերբ մեծամասնությունն ինքնին մի ձևական մոմենտ և միայն, իսկ նույթավես, իրականության մեջ, այդ մեծամասնությունը մեծամասնություն և այն կուսակցությունների, վորոնք կենսագործում են այդ մեծամասնության խարումը բուրժուազիայի կողմից:

Յեվ իհարկե—այստեղ մենք մտենում ենք յերկրորդ «ուղղումին», վերևում նշված հիմնական հանդամանքներից յերկրորդին, —իհարկե, այդ խարեյությունը կարելի յե ճշշտ հասկանալ, միայն պարզելով նրա գառակարգային արժանական ու նրա դասակարգային նշանակությունը: Դա անձնական խարեյություն չե, «սրիկայություն» (կոսկիտ կերպով արտահայտվելով) չե, դա խարուսիկ մի իդեա յե, վոր բզիում և դասակարգի անտեսական դրությունից: Մանր բուրժուան գտնվում է անտեսական այնպիսի զրության մեջ, նրա կենսական պայմաններն այնպես են, վոր նա չի կարող չխարվել, նա ակամա և անխուսափելիորեն հակվում է մերթ դեպի բուրժուազիան, մերթ դեպի պրոլե-

տարիատը: Ինքնուրույն «զիծ» Նրա մոտ տնօնապես չի կարող լինել:

Նրա անցյալը նրան ձգում է դեպի բուրժուազիան, նրա ապագան՝ դեպի պրոլետարիատը: Նրա դատողությունը քաշում է դեպի վերջինը, նրա նախապաշարմունքը (ըստ Մարքսի հայտնի արտահայտության) դեպի առաջինը: Վորուսովի հայտնի արտահայտության) դեպի առաջինը: Վորուսովի ժողովրդի մեծամասնությունը կարողանա զանալ իրական մեծամասնության պետության կառավարման մեջ, իրական ծառայում մեծամասնության շահերին, իրական պաշտպանություն նրա իրավունքների և այլն, գրա համար հարկավոր և վորոշակի գասակարգային պայման: Այդ պայմանն ե՝ մանր բուրժուազիայի մեծամասնության միացումը հեղափոխական պրոլետարիատին գոնե վճռողական մոմենտին և վճռողական սկզբում:

Առանց դրան մեծամասնությունը Փիկցիա յե, վորը կարող է պահպանիլ վորոշ ժամանակ, փայլել, չողջողալ, տղմկել, քաղել զափնիներ, բայց վորն այնուամենայի վ բացարձակ անխուսափելիությամբ գատապարտված և կրախի: Հենց այդպիսին ե, ի միջի այլոց, 1917 թ. հույսին ուստական հեղափոխության մեջ դրսերպկած ենիների ու մենչելիների ունեցած մեծամասնության կրախը:

Այսուհետեւ: Հեղափոխությունը հենց նրանով է տարբերվում պետության միջ գոյություն ունեցող զործերի «սովորական գրությունից», վոր պետական կյանքի վիճեկի հարցերը լուծում է անմիջականորեն զասակարգերի պայքարը և մասսաների պայքարը ընդհուպ մինչեւ զինված պայքարը: Այլ կերպ չի կարող լինել, քանի վոր մասսաներն աղատ են ու զինված: Այս կիմնական գասաթից բղխում է այն, վոր հեղափոխական ժամանակում բավական չե յերկան հանել «մեծամասնության կամքը», —վոչ, պետք է վճռողական մոմենտին վճռողական տեղում ավելի ուժեղ գտնվել, պետք է հաղթել: Սկսած Գերմանիայում տեղի ունեցած միջնադարյան «գյուղացիական պատերազմից» և շարունակելով բոլոր խոշոր հեղափոխական շարժումներով ու դարաշրջաններով ընդհուպ մինչեւ 1848 և 1871 թվական-

ները, ընդհուպ մինչև 1905 թվականը, մենք տեսնում ենք անթիվ որինակներ այն բանի, թե ինչպես ավելի կազմակերպված, ավելի գիտակից, լավագույն ձևով զինված փոքրամասնությունն իր կամքը վասթաթում և մեծամասնության վղին՝ հաղթելով նրան:

Ֆր. Ենդելյան առանձնապես ընդդում եր այն փորձի դասը, վորը վորոշ չափով միավորում և XVI դարի գյուղացիական ապստամբությունը և 1848 թ. հեղափոխությունը Գերմանիայում, այն ե՝ յելույթների անջատվածությունը, ճնշված մասսաների մոտ կենտրոնացման բացակայությունը, կապված նրանց մանր-բուրժուական կենսական դրության հետ: Յեկ, այս կողմից մոտենալով գործին, մենք գալիս ենք հենց նույն հետևությանը. մանր-բուրժուական մասսաների պարզ մեծամասնությունը գեռ վոչինչ չի վճռում և գնոել չի կարող, վորովհետև կազմակերպվածություն, յելույթների քաղաքական գիտակցություն, նրանց կենտրոնացում (վորն անհրաժեշտ և հաղթանակի համար), այս ամենը փոշիացած միլիոնավոր գյուղական մանր տնտեսատերերին ի վիճակի յի տալու միայն նրանց զեկավարումը կամ բուրժուազիայի կողմից, կամ պրոլետարիատի կողմից:

Վերջինիրդո, ինչպես հայտնի յէ, հասարակական կյանքի հարցերը վճռում ե դասակարգային սպաքարն իր ամենախիստ, ամենասուր ձևով, հատկապես քաղաքացիական պատերազմի ձևով: Իսկ այդ պատերազմում, ինչպես և ամեն մի պատերազմում, վճռում ե—այդ ել հայտնի և սկզբունքուն վոչ վոքի կողմից չժխտված փաստ ե—եկոնոմիկան: Ծայր աստիճան բնորոշ և և նշանակալից, վար վո՛չ եսերները, վո՛չ մենչեւիները, չըցանելով այդ բանը «սկզբունքորեն» և հիանալի գիտակցելով ժամանակակից Ռուսաստանի կառիտալիստական բնույթը, չին համարձակվում զրաստորեն նայելու ձմբարտության յերեսին: Նրանք վախենում են ճանաչել ճշմարտությունը, այն՝ և ամեն մի կապիտալիստական յերկրի, այդ թվում Ռուսաստանի, բաժանումը յերեք արմատական, գլխավոր ուժերի՝ բուրժուազիայի, մանր

բուրժուազիայի և պրոլետարիատի: Առաջինի մասին և յերրութիւնի մասին խոսում են բոլորը, նրանց ընդունում են բոլորը: Յերկրորդին—այսինքն հենց թվով մեծամասնությանը—չեն ուզում զգաստորեն գնահատել վո՛չ անտեսական, վո՛չ քաղաքական, վո՛չ ել ուզմական տեսակետից:

Ճշմարտությունն աչք և ծակում—սրան և հանգում են երների ու մենչեւիների ինքնաճանաչման վախը:

III

«Правда»-ի փակումը, յերբ մենք սկսում եյինք տվյալ հոդվածիկը, միայն «պատահական» մի փաստ եր, ուն չամրացված պետական իշխանության կողմից: Այժմ, հունիսի 16-ից հետո, այդ իշխանությունը Փորմալ կերպով փայից «Правда»-ն:

Այդ փակումը, յեթե նրա վրա նայենք պատմականություն, ամբողջությամբ, այդ միջոցի նախապատրաստման ու իրականացման ամբողջ պրոցեսում, զարմանալի պայծառ լույս և սփռում Ռուսաստանում «սահմանադրության եյության» վրա և սահմանադրական իլյուզիաների վտանգի վրա:

Հայտնի յէ, վոր կաղենական կուսակցությունը, Միուկավի և «Речь» թերթի դիմավորությամբ, արդեն ապրիլ ամսից պահանջում ե ուղղեսիաներ բոլշևիկների դեմ: Ամենատարբեր ձևերով, «Речь»-ի «պետական» հոդվածներից ընդհուպ մինչև Միլյուկովի բազմապատիկ բացականչությունները՝ «ձերբակալել» (Լենինին և մյուս բոլշևիկներին), ուղղեսիաների այս պահանջը կազմում եր կաղենադրի գլխավոր մասներից մեկը, յեթե վոչ պիտակորը հեղափոխության մեջ:

Ալքսանդր և Բնիկ կողմից հունիս և հուլիս ամիսներին հնարյած ու հորինված գերմանական լրտեսության մեջ կամ գերմանական փողեր ստանալու մեջ ստորպարարտիչ մեղադրութիւն շատ առաջ, «զինված ապստամբության» մեջ կամ «խոսվության» մեջ նույնքան զրաքարտիչ, հանրածանոթ

փաստերին ու հրապարակված դոկումենտներին հակասող մեղադրումից շատ առաջ,—այս ամենից շատ առաջ կազետական կուսակցությունը սիստեմատիկորեն, անշեղորեն, անդադար պահանջում է ռեպրեսիաներ բոլչելիների գեմ։ Յեթե այժմ այդ պահանջն իրականացված է, ապա ի՞նչպիսի կարծիք պետք է կազմել այն մարդկանց աղնալության կամ խելամտության մասին, վորոնք մոռանում են կամ ձևացնում են, թե մոռանում են այս պահանջի իսկական դասակարգային ու կուսակցական աղբյուրը։ Ի՞նչպես չափավանել կոպտագույն Փալսիֆիկացիա կամ քաղաքականության մեջ անասելի բժամտություն, յեթե եսերներն ու մենչելիները ճշնում են այժմ գործն այնպես ներկայացնել, իբր իրենք հավատում են բոլչելիների գեմ ռեպրեսիաների դիմելու «պատահական» կամ «յեպակի», Հուլիսի 4-ին ծագած «առիթին»։ Չե վոր կան իրոք սահմաններ անվիճելի պատմական ճշմարտությունների խեղաթյուրման։

Բավական և համեմատել ապրիլի 20—21-ի շարժումը հուլիսի 3—4-ի շարժման հետ, վորպեսզի անմիջապես համոզվենք նրանց նույնասեռ բնույթի մեջ։ մասսաների գեղոհության, անհամբերության և հուզմունքի տարերային պոռթիում, պրովոկացիոն կրակոցներ աջից, սպանվածներ նելու վրա, բուրժուազիայի և կաղեների զրապարտիչ վայնասունը, առանձնապես, վոր իբր թե «լենինյանները կրակում եյին նեվսկում», պրոլետարական մասսայի և բուրժուազիայի միջև մզգող պայքարի ծայր աստիճան դապարումն ու սրումը, մանր-բուրժուական կուսակցությունների, Եսերների ու մենչելիների ամենալիակատար շփոթվածությունը, նրանց քաղաքականության մեջ և պետական իշխանության վերաբերյալ հարցում դոյություն ունեցող տատանումների հսկայական թափը ընդհանրապես,—այս բոլոր որյուկտիվ փառաերը բնութագրում են յերկու շարժումներն ել։ իսկ հունիսի 9—10-ը և 18-ը ուրիշ ձևով են ցույց տալիս մեզ միանդամայն նույնանման դասակարգային պատկեր։

Դեպքերի ընթացքը պարզից ել պարունակությունը եւ մասսաների

գժվոհության, անհամբերության ու հուզմունքի ել ավելի աճում, պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև մզգող պայքարի ել ավելի սրում, առանձնապես մանր-բուրժուական մասսաների վրա պրոլետյություն ունենալու համար, իսկ սրա կասպակցությամբ յերկու խոշորագույն պատմական դեպքեր, վորոնք նախապարաստեցին ես-երների և մենշեվիկների կամավաճությունը հակահեղափոխական կազետներից։ Այդ դեպքերն են։ մայիսի 6-ի կոալիցիոն մինիստրությունը, վորոնի մեջ նսերներն ու մենշենիկները դուրս յեկան բուրժուազիայի սպասավորները, ավելի ու ավելի խճճվելով նրա հետ կնքելիք գործարքի և համաձայնության մեջ, նրան հաղարավով «ծառայություններ» մատուցելու մեջ՝ հետաձդելու ամենանհրաժեշտ հեղափոխական միջոցները, և ապա հարձակումը ուղղաձականությունը։ Հարձակումն անխօսակիուրեն նշանակում եր իմպերիալիստական պատերազմի վերսկումը, թմբկերիալիստական բուրժուազիայի ազգեցության, կըսի, դերի հսկայական ուժեղացումը, մասսաների մեջ չովինիզմի ամենալայն տարածումը, վերջապես last but not least (վերջինն ըստ հաշվի, բայց վոչ ըստ կարևորության) իշխանության՝ սկզբում ուղղաձական, իսկ հետո ել ընդհանրապես պետական՝ հանձնումը բանակի հակահեղափոխական հրամանատարական վերնախավերի ձեռքը։

Այս և պատմական գեղաքերի ընթացքը, վորը խորացրեց ու որեց դասակարգային հակասությունները ապրիլի 20—21-ից մինչեւ հուլիսի 3—4-ը և թույլ տվեց հակահեղափոխական բուրժուազիային հուլիսի 4-ից 4ետո իրականացնել այն, ինչ արդեն ապրիլի 20—21-ից ամենալիակատար հստակությամբ ուրվագծվեց վորոնք նրա ծրագիրը և տակտիկան, նրա մերձակորագույն նպատակը, և նրա «մաքուր-մաքուր» միջոցները, վորոնք պարտավոր են տանելու դեպի նպատակը։

Պատմական տեսակետից չկա ավելի անբովանդակ մի բան, չկա թերորիապես ավելի խղճալի և գործնականապես ավելի ծիծաղելի մի բան, քան հուլիսի 4-ի առթիվ բարձրաց-

ված մէշչանական նվինլոցները (վորոնք, ի միջի այլոց, կրկնվում են նաև լ. Մարտովի կողմից) այն մասին, թե բոլշևիկները «հնարամտեցին» իրենց պարտություն հասցնել, թե նրանց «ավանտուրիդմն» առաջացրեց այդ և այլն և այլն: Այս բոլոր նվինլոցները, այս բոլոր դնատողությունները, թե «չպետք եր» մասնակցել (մասսաների արխի-որինական գժղության ու հուզմունքին «խաղաղ ու կաղմակերպված» բնույթ տալու փորձի մեջ!!), —կամ հանդում են ունեղատության, յեթե բղխում են բոլշևիկներից, կամ հանդիսանում են մանր բուրժուայի համար սովորական արտահայտություն նրա սովորական ահարեկվածության ու շփոթվածության; Իրականում հուզիսի 3—4 Պ շարժումը նույնպիսի անխուսափելիությամբ աճեց ապրիլի 20—21-ի շարժումից և նրանից հետո, ինչպիսի անխուսափելիությամբ աճառը հաջորդում ե գարնանը: Պոլիտարական կուսակցության անդամանական պարտքն եր մնալ մասսաների հետ, աշխատելով նրա արդարացի յելույթներին տալու ամենից ավելի խաղաղ ու կաղմակերպված բնույթ, չքաշվել մի կողմ, չվանալ իր ձեռքերը Պիղատոսի նման այն պեղանտական հիման վրա, թե մասսան մինչև վերջին մարդը կաղմակերպված չե և թե նրա շարժման մեջ լինում են եքսցեններ (իբր թե եքսցեններ չեն յեղել ապրիլի 20—21-ին. իբր թե յեղել ե ապատության մեջ մասսաների թեկուղ մի լուրջ շարժում առանց եքսցենների):

Իոկ բոլշևիկների պարտությունը հուլիսի 4-ից հետո պատմական անխուսափելիությամբ բղխեց դեպքերի ամբողջ նախորդ ընթացքից հատկապես նրա համար, վոր մանր-բուրժուական մասսան և նրա առաջնորդները, ևսերներն ու մենշևիկները, ապրիլի 20—21-ին դեռ չեյին կաշկանդվել հարձակումով, դեռ չեյին խճճմել «կոռալիցիոն մինիստրության» մեջ ըսուրժուապիայի հետ կնքած գործադրիկներով, իոկ հուլիսի 4-ի մոտերքը նրանք իրենց այնքան եյին կաշկանդել ու խճճել, վոր չեյին կարող չսսել. պատրաստ ենք դրծակցելու (ուսպեսիաներում, զբարտություններում, դահճության մեջ) հակահեղափոխական կաղետների հետ:

Եսերներն ու մենշևիկները հուլիսի 4-ին վերջնականացեած գլուխեցին հակահեղափոխության աղքահորը, վորովհետեւ նրանք անջեղորեն այդ հորն ելին վլորվում մայիսին և հունիսին, կոալիցիոն մինիստրության մեջ և հարձակման քաղաքականությանը հավանություն տալիս:

Մենք մի քիչ շեղվեցինք, ըստ յերկութինք, մեր թեմայից, «Պրավդա»-յի փակման հարցից, զեալի հուլիսի 4-ի պատմական գնահատականի հարցը: Բայց այս միայն ըստ յերկութինք ե, վորովհետեւ մեկն առանց մյուսի չի կարելի հասկանալ: Մենք տեսանք, վոր «Պրավդա»-յի փակումը, բոլշևիկների ձերբակալությունները և նրանց մյուս հետապնդումները, յեթե նայենք գործի եյությանը և գեղքերի կապակցությանը, իրենցից ներկայացնում են վոչ այլ ինչ, քան հակահեղափոխության և մասնավորապես կաղետների վաղեմի ծրագրի իրադրում:

Ծայր ատոիճան ուսանելիք յե այժմ քննել, թե հատկապես ոչ և ինչպիսի պրիումներով իրականացրեց այդ ծրագիրը:

Նայենք փաստերին: Հուլիսի 2-ին և 3-ին շարժումն աճում ե, մասսաները յեռում են, հուզված կառավարության անդործությունից, թանգությունից, քայլայումից, հարձակումից: Կադիտները հռունում են, խաղալով «զիջախաղ» և ուլտիմատում ներկայացնելով եսերներին ու մենշևիկներին, թողնելով նրանց իշխանության հետ կապվածներին, բայց իշխանություն չունեցողներին, հատուցելու պարտության համար և մասսաների հուզմունքի համար:

Բոլշևիկները 2-ին և 3-ին հետ են պահում յելույթից: Այդ խոստովանեց նույնիսկ «Դело Народа»-յի վկան, պատմելով այն մասին, թե ինչ է յեղել հուլիսի 2-ին Գրենադերական գնդում: 3-ի յերեկոյան շարժումը շատ մեծ չափերի յե հասնում, իսկ բոլշևիկները կոչ են կաղմում շարժմանը «խաղաղ ու կաղմակերպված» բնույթ տալու անհրաժեշտության մասին: Հուլիսի 4-ին աջից կատարվող պրովիդացիոն կրակոցները ավելացնում են հրածդության գոհերի թիվը յերկու կողմերից ել. պետք ելուղծել, վոր Գործ. Կո-

միտեյի խոստումը դեպքերը քննելու, որը յերկու անգամ
բյուջետեն հրատարակելու և այլն և այլն, մնաց դատարկ
խոստում։ Եսերներն ու մենշնեկները բոլորովին վոչինչ
չարին, նույնիսկ յերկու կողմերից սպանվածների լին
ցուցակը նրանք չհրապարակեցի՞ն։

4-ի գիշերը բոլշևիկները կոչ կազմեցին յերայժմերը
դադարեցնելու մասին և նույն գիշերը դա տպվել է «Прав-
да»-յում։ Բայց նույն այդ գիշերն սկսվում է առաջին, Հա-
կահեղափոխական զորքերի գալուստը Պիտեր (յերևի և եր-
ների ու մենշնեկների, նրանց Խորհուրդների կոչով կամ
Համաձայնությամբ, ըստվորում, իհարկե, այդ «նրբա-
գրաց» կետի վերաբերյալ, մինչև այժմ, դադունիք սպահելու
ամենավորագույն կարիքն անդամ անցնելուց հետո, ամե-
նից շատ և ամենից խիստ են լուռթյուն պահպանում)։ Յերկ-
րորդ, հենց այդ գիշերը սկսվում են բոլշևիկների ջարդերը
յաւնիւնների ջոկատների և նմանների կողմից, վորոնք գոր-
ծում են զորքերի հրամանատար Պոլովցեվի և գլխավոր
շտաբի հանձնարարությամբ։ 4-ից 5-ը քարութանդ են ա-
նում «Правда»-ն։ 5-ին և 6-ին քարութանդ են անում
«Տրդ» տպարանը, որը ցերեկով սպանում են բանվոր Վոլ-
նովին այս բանի համար, վոր նա տպարանից դուրս եր
տանում «Լիստօք Պրավդա»-ն, կատարում են բոլշևիկների
խոռարկություններ ու ձերբակալություններ, զինաթափ են
անում հեղափոխական զնդերը։

Ա՞վ սկսեց այս բոլորը կատարել։ Առչ կառավարու-
թյունը և վոչ Խորհուրդը, այլ Հակահեղափոխական զինա-
րական շայկան, վոր կենտրոնացած և գլխավոր շտաբի
շուրջը, զործում և «Հակահետափուլության» անունից,
զործի յե զնում Պերեմերդեկի ու Ալեքսինսկու Փարբեկար,
վարպեսզի զորքերի «կատաղությունը բարձրացնի» և այլն։

Կառավարությունը բացակայում է, Խորհուրդները բա-
ցակայում են, նրանք գողում են իրենց սեփական վիճակի հա-
մար, նրանք մի շարք հաղորդագրություններ են ստանում,
թե կազակները կարող են դալ և ջախջախել իրենց։ Սևհա-
րյուրյակային և կաղետական մամուլը, վոր հալածանք կադ-

մակերպեց բոլշևիկների դեմ, հալածանք և սկսում Առ-
հուրդների դեմ։

Եսերներն ու մենշնեկներն իրենց ամբողջ քաղաքակա-
նությամբ կապեցին իրենց ձեռներն ու վոտոները։ Վորպես
կապված մարդկեկ, նրանք կանչում ենին (կամ հանգուլութում
ենին կոչմն) Հակահեղափոխական զորքերին Պիտեր։ Իսկ
այդ նրանց ե՛լ ամելի շատ կապեց։ Նրանք վլորիկցին Հա-
կահեղափոխական զգվելի հորի բուն իսկ հատակը։ Նրանք
յերկշուր կերպով արձակում են իրենց սեփական հանձնաժո-
ղովը, վոր նշանակված եր քննելու բոլշևիկների «գործը»։
Նրանք ստորաբար բոլշևիկներին հանձնում են Հակահեղա-
փոխությանը։ Նրանք ստորացած կերպով մասնակցում են
սպանված կազակների թաղման ցույցին, այսպիսով համ-
ուրուում Հակահեղափոխականների ձեռքը։

Նրանք կապված մարդեկ են։ Նրանք հորի հատակումն
են։

Նրանք այս ու այն կողմ են նետում, տալով պորտՓԵլը
կերենսկուն, վնալով կանոսսա կադեսների մոտ, կապմա-
կերպելով «Զեմսկий собор», կամ Հակահեղափոխական կա-
ռավարության «թագադրությունը» Մոսկվայում։ Կերեն-
սկին արձակում և Պոլովցելին։

Սակայն այս նետումները մնում են նետումներ, ամենե-
պիս չփոխելով զործի եյությունը։ Կերենսկին արձակում
և Պոլովցելին և միմնույն ժամանակ ձեւակերպում, որինա-
կանացնում և Պոլովցելի միջոցները, նրա քաղաքականու-
թյունը, վակում և «Правда»-ն, մտցնում և մահապատիժ
զինուրների համար, միտինդների արգելում ուղմանիա-
տում, շարունակում բոլշևիկների (նույնիսկ կոլոնացյի՛)
ձերբակալությունները Ալեքսինսկու ծրագրով։

Թուաստանում «սահմանադրության եյությունը» վերոշ-
վում և աղջու պայծառությամբ։ Հարձակումը ուղմանա-
կատում և կոալիցիան կագետների հետ թիկունքում եսերնե-
րին ու մենշնեկներին զլորում և Հակահեղափոխական հո-
րը։ Իրականում պետական իշխանությունն անցնում է նրա-
ձեռքը, զինուրական շայկայի ձեռքը։ Կերենսկին և Սեբե-

թելու ու Զերնովի կառավարությունը միայն շիրմա յին
նրա համար, նրանք ստիպված են հետին քվով ողբնակա-
նացնել նրա միջոցները, նրա քայլերը, նրա քաղաքականու-
թյունը:

Կերենսկու, Ծերեթելու, Զերնովի առևտուրը կադետնե-
րի հետ ունի յերկրորդական, յեթե վոչ տասերորդական
նշանակություն: Կհաղթեն արդյոք կադետներն այդ առև-
տրում, կմնան արդյոք դեռ Ծերեթելին ու Զերնովը «միայ-
նակ», գործի եյությունը չի փոխվի, եսերների ու մենչեւկ-
ների շրջադարձը դեպի Հակահեղափոխությունը (շրջա-
դարձ, հարկադրված նրանց ամբողջ քաղաքականությունից
մայիսի 6-ից) մնում է հիմնական, դիմավոր վճռողական
դարձնել:

Կուսակցական զարգացման ցիկլն ավարտվեց: Եսերներն
ու մենշեւկները զլորվում ելին աստիճանից աստիճան, վե-
տրովարի 28-ին կերենսկու հանդեպ տածած «վատահությու-
նից» դեպի մայիսի 6-ը, վոր նրանց կազեց հակահեղափո-
խությունից, դեպի հուլիսի 5-ը, յերբ նրանք գլորվեցին
նրա մոտ մինչեւ ներքեւ:

Սկսվում են որ շրջան: Հակահեղափոխության հաղթու-
թյունն առաջցնում ե մասսաների հիասթափություն եսեր-
ների ու մենշեւկների կուսակցությունների նկատմամբ և
մասսաներին ճանապարհ ե բաց անում նրանց՝ դեպի հեղա-
փոխական պրոլետարիատին պաշտպանելու քաղաքականու-
թյունն անցնելու համար:

Դրամ է 1917 թ. ողոսոսի 8-ին (հուլիսի 26-ին),
«Ռածում և Սոլդատ» № № 11 և 12, 1917 թ. ողոսոսի 17 և 18 (4 և 5):
Յերկեր, հ. XXI, էջ 48—59, 2-րդ և 3-րդ հրատ.:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՄԵՐԸ

Յուրաքանչյուր հեղափոխություն նշանակում ե շեշտա-
կի բեկում ժողովրդի հսկայական մասսաների կյանքում:
Յեթե այլպիսի բեկում չի հասունացել, ապա իսկական, հե-
ղափոխություն չի կարող տեղի ունենալ: Յեվ ինչպես յուրա-
քանչյուր բեկում ամեն մի մարդու կյանքում շատ բան ե
սովորեցնում նրան, հարկադրում ե նրան շատ բան ապրել
ու գլաւ, այնպես ել հեղափոխությունը կարճ ժամանակում
տալիս ե ամբողջ ժողովրդին ամենաբոլանդակալից և ար-
ժեքավոր դասեր:

Հեղափոխության ժամանակ միլիոնավոր և տասնյակ-
միլիոնավոր մարդիկ ամեն մի շաբաթվա ընթացքում ավելի
բան են սովորում, քան սովորական, քնած կյանքի ամբողջ
մի աարում: Վորովչետե ամբողջ ժողովրդի կյանքի շեշտա-
կի բեկման որինակով առանձնապես պարզ տեսանելի յե-
տառնում, թե ժողովրդի վոր գաղակարգերն են հետազըն-
դում այս կամ այն նպատակները, ինչպիսի ուժ ունեն
նրանք, ինչպիսի միջոցներով են գործում:

Յուրաքանչյուր գիտակից բանվոր, դիմովոր, գյուղացի
պետք ե ուշադիր կերպով մտածի ուստական հեղափոխու-
թյան դասերի մասին, մանավանդ հիմա՝ հուլիսի վերջին,
յերբ պարզ տեսանելի յե դարձել, վոր մեր հեղափոխության
առաջին շրջանն անհաջող վախճան ունեցավ:

Իսկապես, տեսնենք, թե ի՞նչի եյին ձգտում հասնել
բանվորների և գյուղացիների մասսաներ՝ հեղափոխու-



թյուն կատարելով : Նրանք ի՞նչ եյին սպասում հեղափոխությունից : Հայտնի յէ, վոր նրանք սպասում եյին ազատություն, հաշտություն, հաց, հող :

Իսկ մենք հիմա ի՞նչ ենք տեսնում :

Ազատության փոխարեն սկսում են վերականգնել նախկին կամայականությունը : Զինվորների համար մահապատիճ են մտցնում ուղմածակատում, դյուզացիներին դատի յեն յենթարկել կալվածատիրական հողի ինքնաղլուխ գրավման համար : Ճակնուվրա յեն անում բանվորական թերթերի տպարանները : Առանց դատի գակում են բանվորական թերթերը : Զերբարայում են բոլշևիկներին, հաճախ նույնիսկ վոչ մի մեղադրանք չառաջարելով՝ կամ թե առաջադրելով բացահայտ զրաբարտական մեղադրանքներ :

Թերևս առարկեն, թե բոլշևիկներին հետապնդելը ազատության խախտում չե, վորովհետև հետապնդում են միայն վորոշ անձերի՝ վորոշ մեղադրանքի համար : Սակայն այդ առարկությունը ակնհայտ և ակներեւ սուտ ե, վորովհետև ի՞նչպես կարելի յե տակնուվրա անել տպարանն ու փակել թերթերը՝ առանձին անձերի հանցագործությունների համար, թեկուղ այդ մեղադրանքները նույնիսկ առացուցված և ճանաչված լինեն դատարանի կողմից : Այլ բան ե, յեթե կառավարությունն որենքով հանցագործ ճանաչեր բոլշևիկների ամբողջ կուսակցությունը, նրանց ուղղությունն իսկ, նրանց հայացքները : Բայց ամեն վոք դեռև, վոր ազատ Ռուսաստանի կառավարությունը նման բան չեր կարող անել և չի արել :

Գլխավորն այժմ այն ե, վոր կալվածատերերի և կապիտալիստների լրագրերը կատաղաբար հայհոյում եյին բոլշևիկներին այն պայքարի համար, վոր նրանք մղում եյին պատերազմի դեմ, կալվածատերերի դեմ և կապիտալիստների դեմ. այդ լրագրերը պահանջում եյին բոլշևիկների բացահայտ ձերբակալում ու հետապնդում դեռ այն ժամանակ, յերբ վոչ մի մեղադրանք վոչ մի բոլշևիկի դեմ զեռ չեր հնարկած : Ժողովուրդը հաշտություն և ուղում : Իսկ

բից սկսեց զալթողական պատերազմ մղել այն դադանի ուղայմանագրերի հիման վրա, վոր նախկին ցար Նիկոլայ Ա-ը կնքել եր անդլիական և ֆրանսական կապիտալիստների հետ, ուստական կապիտալիստների կողմից ստար ժողովներին կողովուելու համար : Այդ գաղտնի պայմանագրերն այնպիս ել մնացին չհրապարակված : Ազատ Ռուսաստանի կառավարությունը գլուխն աղատեց զանազան պատրժականներով, այսպես ել բոլոր ժողովուրդներին արդարացի հաշտություն չառաջարկելով :

Հաց չկա : Մովք դարձյալ վրա յե հասնում : Բոլորը տեսնում են, վոր կապիտալիստներն ու հարուստներն անխղճորեն խարում են դանձարանին ուազմական մատակարարությունների գործում (պատերազմը հիմա ժողովրդին որական 50 միլիոն ու. յե նստում), չսված չահույթներ ստանում՝ զների բարձրացման միջոցով, իսկ մթերքների արտադրության լուրջ հաշվառման և դրանք բանվորների կողմից բաշխելու համար ուղղակի վոչինչ չեն արել : Կապիտալիստներն ավելի ու ավելի յեն լիտիանում՝ փողոց նետելով բանվորներին, և այդ այնպիսի ժամանակ, յերբ ժողովուրդը տառապատում և ասլրանք չունենալու պատճառով : Գյուղացիների ահաղին մեծամասնությունը բարձրածայն ու պարզորոշ հայտարարեց մի յերկար չամազումարներում, վոր իրենք հողի կալվածատիրական սեփականությունը հայտարում են անարդարություն և թալան : Իսկ կառավարությունը, վոր իրեն հեղափոխական և գեմոկրատական ենականությունը, չառաջարարական և ամեներով դյուզացիներին քթից բոնած ման ածել և խաբել նրանց խոսանություն ու ձգձումներով : Մինհատը Զերնովին կապիտալիստներն ամիսներով թույլ չեյին տալիս որենք հրատարակել հողի զնման և վաճառքի արգելման մասին : Իսկ յերբ վերջապես այդ որենքը հրատարակիված եր, ապա կապիտալիստները սոսր զրաբարտական հալածանք հարուցեցին Զերնովի դեմ ու շարունակում են այդ հալածանքը մինչեւ այժմ :

Կարմածատերերին պաշտպանելու զործում կառավարությունն այնպիսի լկափոթյան և հասել, վոր սկսել և դատի

յենթարկել գյուղացիներին՝ «ինքնազլուխ» գրավումների համար:

Գյուղացիներին քթից բռնած ման են ածում, համոզելով սպասել մինչև Սահմանադիր ժողովը: Խոկ այդ ժողովի գումարումը կապիտալիստները շարունակ ձգձգում են: Հիմա, յերբ այդ գումարումը, բոլցեիկների պահանջի աղքեցությունը, նշանակված ե սեպանմբերի 30-ին, կապիտալիստները բացահայտ կերպով աղաղակում են, վոր այդ «անհարին» կարճ ժամկետ ե, և պահանջում են հետաձել Սահմանադիր ժողովի գումարումը... Կապիտալիստների և կարվածատերերի կուսակցության՝ «կաղետների» կուսակցության կամ «ժողովրդական աղատություն» կուսակցության ամենաազգեցիկ անդամները, որինակ՝ Պանինան, ուղղակի քարոզում են Սահմանադիր ժողովի գումարումը Գետաձել մինչև պատերազմի վերջանալը:

Հողի գործում սպասիր մինչև Սահմանադիր ժողովը: Սահմանադիր ժողովի գործում սպասիր մինչև պատերազմի վերջը: Պատերազմի վերջի համար սպասիր մինչև լիակատար Հազմությունը: Ահա թե ինչ ե գուրս գալիս: Կապիտալիստներն ու կարվածատերերն ուղղակի ծաղրում են գյուղացիներին, կառավարության մեջ իրենց մեծամասնությունն ունենալով:

Սակայն այդ ինչպես կարող եր պատահել աղատ թերկում, ցարական իշխանության տասլալումից հետո:

Վաշչակառ յերկրում ժողովրդին կառավարում են ցարը և մի բուռ կարվածատերեր, կապիտալիստներ, չինվնիկներ, վորոնց վոչ վոք չի ընտրել:

Սպատ յերկրում ժողովրդին կառավարում են միայն նրանք, ում նա ինքն ե ընտրել այդ գործի համար: Ընտրությունների ժամանակ ժողովուրդը բաժանվում է կուսակցությունների, և սովորաբար բնակչության յուրաքանչյուր դասակարգ կաղմում ե իր առանձին կուսակցությունը, որինակ՝ կարվածատերերը, կապիտալիստները, գյուղացիները,

բանվորները կազմում են առանձին կուսակցություններ: Այդ պատճառով ժողովրդին կառավարելն աղատ յերկրներում կատարվում է կուսակցությունների բացահայտ պայքարի և նրանց միջև կայացած աղատ համաձայնության միջոցով:

Ցարական իշխանությունը 1917 թ. փետրվարի 27-ին տապալելուց հետո, Ռուսաստանը մոտավորապես 4 ամիս կառավարվել է վորպես աղատ յերկիր, այն ե՝ աղատ կազմվող կուսակցությունների բացահայտ պայքարի և նրանց միջև կայացած աղատ համաձայնության միջոցով: Հետեաբար, ուստական հեղափոխության դարբացումը հասկանալու համար ամենից անհրաժեշտն է ուսումնասիրել, թե վորոնք եյին գլխավոր կուսակցությունները, վո՞ր դասակարգի շահերն եյին նրանք սպասարկում, ի՞նչ վոխհարաբերություններ կային բոլոր այդ կուսակցությունները միջև:

Ցարական իշխանության տապալումից հետո պետական իշխանությունն անցավ առաջին ժամանակավոր կառավարության ձեռքը: Նա կազմված եր բուրժուազիայի ներկայացուցիչներից, այսինքն կապիտալիստներից, վորոնց միացան նաև կարվածատերերը: «կաղետների» կուսակցությունը, կապիտալիստների գլխավոր կուսակցությունը, կամնամած եր առաջին տեղում, վորպես բուրժուազիայի կառավող և կառավարական կուսակցություն:

Իշխանությունն այդ կուսակցության ձեռքն ընկալ վոչ պատճառաբար, թերեւտ ցարական զորքերի դեմ կուի եյին մղում, աղատության համար արյուն եյին թափում, իհարկե, վո՞չ թե կապիտալիստները, այլ բանվորներն ու գյուղացիները, նավաստիներն ու զինվորները: Իշխանությունն ընկալ կապիտալիստների կուսակցության ձեռքն այն պատճառով, վոր այդ դասակարգն իր ձեռքին ուներ հարստության, կաղմակերպման և զիտության ուժը: 1905 թվից հետո և մանավանդ պատերազմի ընթացքում կապիտալիստների և նրանց հարող կարվածատերերի դասակարգը Ռուսաս-

տանում ամենից շատ եր առաջադիմել իր կազմակերպման գործում:

Կաղետների կուսակցությունը միշտ միապետական է յեղել, թե՛ 1905 թվին, թե՛ 1905 թվից մինչև 1917 թիվը: Յարական բոնակալության նկատմամբ ժողովրդի տարած հաղթությունից հետո այդ կուսակցությունը հանրապետական հայտարարեց իրեն: Պատմության փորձը ցույց է տալիս, վոր կապիտալիստների կուսակցությունները, յերբ ժողովուրդը հաղթում եր միապետությանը, միշտ համաձայնում ելին հանրապետական լինել, միայն թե կարողանան պաշտպանել կապիտալիստների արտօնություններն ու նրանց լրիվ իշխանությունը ժողովրդի վրա:

Կաղետների կուսակցությունը խոսքով կողմնակից է «Ժողովրդական ազատությանը»: Գործով նա կողմնակից և կապիտալիստներին, և նրա կողմքը կանդնեցին խոկույն և եթ բոլոր կալվածատերերը, բոլոր միապետականները, բոլոր սևՀարյուրյակայինները: Դրա ապացույցը՝ մամուլի ու ընտրությունները: Բոլոր բուրժուական թերթերն ու ամբողջ սևՀարյուրյակային մամուլը հեղափոխությունից հետո ձախակցեցին կաղետներին: Բոլոր միապետական կուսակցությունները, չհամարձակվելով բացահայտ կերպով հանդեմ դաշտ, ընտրությունների ժամանակ պաշտպանում ելին, որինակ Պետրովբարում, կաղետների կուսակցությանը:

Կառավարական իշխանություն ստանալով՝ կաղետները բոլոր ջանքերն ուղղեցին գետի մի նպատակ՝ շարունակել դամբթողական, թալանչիական պատերազմը, վոր սկսել եր Նիկոլայ II ցարը՝ թալանչիական գաղտնի պայմանագրեր կնքելով անդիմական ու ֆրանսական կապիտալիստների հետ: Այդ պայմանագրերով ուստական կապիտալիստներին խոստացված է հաղթության դեպքում և՛ կոստանդնուպոլիսի, և՛ Գալիցիայի, և՛ Հայաստանի գրավումը և այլն: Իսկ ժողովրդից կաղետների կուսակցությունն ոճիք եր թափում գատարել պատրվակումներով ու խոստումներով, հետաձդելով բանվորների և գյուղացիների համար մեծ, անհրաժեշտ

գործերի բոլոր վորոշումները մինչև Սահմանադիր Ժողովը, չնչանակելով նրա դումարման ժամկետը:

Ուղարկով ազատությունից՝ ժողովուրդն սկսեց ինքնուրույն կազմակերպվել: Ռուսաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող բանվորների և գյուղացիների ժամկետով կազմակերպությունն ելին Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորների Խորհուրդները: Այդ Խորհուրդներն սկսեցին կազմակորին արդեն փետրավարյան հեղափոխության ժամանակ, և դրանից միքանի շարաթ անց՝ Խորհուրդները միավորել ելին Ռուսաստանի խոչըր քաղաքների մեջ մատում և բազմաթիվ գավառներում բանվոր գատարդի և գյուղացիության բոլոր գիտակից առաջապեր մարդկանց:

Խորհուրդներն ընարվում ելին միանգամայն աղատ կերպով: Խորհուրդները ժողովրդի, բանվորների և գյուղացիների մասսաների խոկական կազմակերպություններն ելին: Խորհուրդները ժողովրդի վիթխարի մեծամասնության խոկական կազմակերպություններն ելին: Զինվորական համական կազմած բանվորներն ու գյուղացիները դիմված ելին:

Ինքնըստիրքյան հասկանալի յե, վոր Խորհուրդները կարող ելին և պետք է իրենց ձեռքն առնելին պետական ամբողջ իշխանությունը: Մինչև Սահմանադիր Ժողովի գումարումը պետության մեջ չպետք է լիներ վո՞չ մի այլ թշրիմականություն, բացի Խորհուրդներից: Միայն այն ժամանակ մեր հեղափոխությունը կղանար խոկապես ժողովրդական, իսկապես դեմոկրատական հեղափոխություն: Միայն այն ժամանակ աշխատավոր մասսաները, վորոնք իսկապես հաշտության են ձգտում, իսկապես չեն չահագրգումած զավթողական պատերազմով, կկարողանային սկսել վճռաբար և հաստատապես կյանքում կենսագործել այնպիսի քաղաքականություն, վորը վերջ կդներ թե՛ զավթողական պատերազմին և թե՛ կհասցներ հաշտության: Միայն այն ժամանակ բանվորներն ու գյուղացիները կկարողանային սանձահարել կապիտալիստներին, վորոնք չչմեցուցիչ զումարներ են շահում գատարվածի չնորդիմ» և յերկիրը հասցըել են վլուգման ու սուբերազմի չնորդիմ»

վի: Բայց Խորհուրդներում պատգամավորների փոքր մասն եր կողմնակից հեղափոխական բանվորների կուսակցությանը, սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներին, վորոնք պահանջում եյին ամբողջ պետական իշխանությունը հանձնել Խորհուրդների ձեռքը: Իսկ պատղամավորների մեծ մասը Խորհուրդներում կողմնակից եր սոցիալ-դեմոկրատ մենչեւիկներին և եսերներին, վորոնք գեմ՝ եյին իշխանությունը Խորհուրդներին հանձնելուն: Փոխանակ հեռացնելու բուրժուազիայի կառավարությունը և այն փոխարինելու Խորհուրդների կառավարությամբ, այդ կուսակցությունները պնդում եյին բուրժուազիայի կառավարությունը պաշտպանելու և նրա հետ համաձայնության գալու, նրա հետ ընդհանուր կառավարություն կազմելու վրա: Հեղափոխության սկզբից անցած բոլոր 5 ամիսների հեղափոխական զարդացման ամբողջ ընթացքի գլխավոր բովանդակությունը բուրժուազիայի հետ վարած համաձայնությունների այդ քաղաքականության մեջ է կայանում, վոր վարում եյին ժողովրդի մեծամասնությունը վաստակությունը վայելող եսերների և մենշենիկների կուսակցությունները:

Նախ և առաջ տեսնենք, թե ինչպես եր ընթանում եսերների և մենշենիկների այդ համաձայնողականությունը բուրժուազիայի հետ, իսկ ապա վնասնենք այն հանդամանքի բացատրությունը, վոր ժողովրդի մեծամասնությունը վաստակությունը:

Մենշենիկների և եսերների համաձայնողականությունը կապիտալիստների հետ կատարվում եր ուստական հեղափոխության բոլոր ժամանակաշրջաններում կամ մեկ, կամ մյուս ձևով:

1917 թ. փետրվարի իսկ վերջին, հենց վոր ժողովուրդը հաղթեց, և ցարական իշխանությունը տապալվեց, կապիտալիստների ժամանակավոր կառավարությունն իր կազմի մեջ մտցրեց կերենսկուն վորպես «սոցիալիստի»: Իրականում կերենսկուն յերբեք սոցիալիստ չի յեղել, նա յեղել է միայն տրիւղովիկ, իսկ «սոցիալիստ-հեղափոխական» նա սկսեց հաշվել միայն 1917 թ. մարտից, յերբ այդ արդեն

անվտանգ եր և անողուտ չեր: Կերենսկու միջոցով, վորպես Պետրովդրադի Խորհրդի փոխ-նախագահահան, կապիտալիստների ժամանակավոր կառավարությունն իսկույն ևեթաշխատեց իր կողմը զբավել և ձեռնասուն դարձնել Խորհուրդը: Խորհուրդը, այսինքն նրանում դերակըող եսերներն ու մենշենիկները, թողեց, վոր իրեն ձեռնասուն դարձնեն, իսկույն համաձայնելով կապիտալիստների ժամանակավոր կառավարություն կազմվելուց հետո «աջակցել նրան», «վորչափով» նա կատարում և իր խոստումները:

Խորհուրդն իրեն համարում եր ժամանակավոր կառավարության գործողությունները ստուգող, վերահսկող: Խորհրդի առաջնորդները սահմանեցին այսպես կոչված «կոնտակտի հանձնաժողով»՝, այսինքն հանձնաժողով՝ կառավարության հետ կոնտակտի համար, չփվելու համար: Այդ կոնտակտի հանձնաժողովում Խորհրդի եսերական և մենշենիկյան առաջնորդներն անընդհատ բանակցություններ եցին վարում կապիտալիստների կառավարության հետ, գտնվելով, իսկապես ասած, առանց պորտֆելի մինիստրների կամ վոշաշտունական մինիստրների դրության մեջ:

Ամբողջ մարտին և համարյա թե ամբողջ ապրիլին շարունակվում եր իրերի այդ դրությունը: Կապիտալիստները գործում եյին ձղձղութներով և պատրիակումներով, աշխատելով ժամանակ շահել: Վոչ մի փոքրիչատե լուրջ քայլ հեղափոխության զարգացման համար կապիտալիստների կառավարությունն այդ ժամանակված ընթացքում չի արել: Նույնիսկ իր ուղղակի անմիջական ինդրի Սահմանադիր ժողովի գործարման համար՝ կառավարությունն ուղղակի վոչինչ չարեց, չփոխադրեց հարցը տեղերը, չհիմնեց անդամ հարցի նախապատրաստման կենտրոնական հանձնաժողով: Կառավարությունը մտահոգված եր մի բանով: զադանաբար վերանորոգել այն թալանչիական միջադրային պայմանագրերը, վոր ցարը կնքել եր Անդրիայի և Ֆրանսիայի կապիտալիստների հետ, վորքան կարելի յե զգույշ և անկատելի կերպով արդեւակել հեղափոխությանը, ամեն ինչ խոստանալ, վոչինչ չկատարել: Եսերներն ու մենշենիկները

«կրնտակտի հանձնաժողովում» կատարում եյին փարթամ ֆքազներով, խոստումներով, «նախաճաշերով» կերակրվող չիմարների դեր: Եսերներն ու մենչև իները, ինչպես աղոռակը հայտնի առակում, յենթարկվում եյին շողոքորթության ազդեցության, զոհունակությամբ լսում եյին կապիտալիստների հավաստիացումները, թե նրանք բարձր են գնահատում Խորհուրդները և առանց նրանց վոչ մի քայլ չեն անում:

Իսկ իրականում ժամանակն անցնում եր, ու կապիտալիստների կառավարությունն ուղղակի վոչինչ չարեց հեղափոխության համար: Իսկ հեղափոխության դեմ նա կարողացավ այդ ժամանակամիջոցում վերանորոգել գաղտնիթթալանչիական պայմանագրերը, ավելի ճիշտ՝ հաստատել դրանք և «աշխուժացնել» լրացուցիչ, նույնքան գաղտնիթթանակցություններով անդո՞քրանսական խմբերիալոյմի դիմանագեաների հետ: Հեղափոխության դեմ նա կարողացել և այդ ժամանակիմ ընթացքում հիմք դնել գործող բանակի գեներալների ու սպաների հակահեղափոխական կաղմակերպմանը (կամ դոնե մերձեցմանը): Հեղափոխության դեմ նա կարողացել և սկսել արդյունաբերողների, ֆարբիկանտների, գործաբանատերների կազմակերպումը, վորոնք հարկազրված եյին անել զիջում զիջումի հետևից բանվարների ճնշման տակ, բայց և միևնույն ժամանակ սկսում եյին սարոտածի յենթարկել արտադրությունը և նախազարտատել նրա դաշտարեցումը, դրա համար սպասելով հարմար մոժենափ:

Բայց առաջալոր բանվորների և զյուղացիների կաղմակերպումը Խորհուրդներում անշեղ առաջ եր գնում: Ճընշված դասակարգերի լավագույն մարդիկ զգում եյին, վոր կառավարությունը, չնայած նրա համաճայնությանը Պետրոգրադի Խորհրդի հետ, չնայած կերենսկու ճոռմարանությանը, չնայած «կոնտակտի հանձնաժողովին», մնում ե ժողովրդի թշնամին, հեղափոխության թշնամին: Մասսաներն զգում եյին, վոր յեթե չկոտրեն կապիտալիստների կողմից բանվորներին ճիմարացնելու, բաժանելու և ուժապատ անելու համար: Այդ պրիորն եւ այսպիս կոչված էր այսպիսն՝ միացյալ, բուրժուազիայից և սոցիալիզմի փախուակներից (перебежчиков): Կաղմակած ընդհանուր մինիստրություն:

Այն յերկրներում, վորտեղ ամենից յերկար ժամանակ գոյություն ունի աղասությունն ու զեմոկքատիան՝ հեղափոխական բանվորական շարժման կողքին՝ Անդրեյում և

Սյուրծը, հեղափոխության դործն անխուսափելիորեն տանուլ կտրվի: Մասսաների մեջ աճում եր անհամբերություն և պազազում:

Այն սոոթկաց ապրիլի 20—21-ին: Շարժումը բանկեց տարերայնորեն, առանց վորեւ մեկի կողմից պատրաստված լինելու: Շարժումն այնքան չեշտակի կերպով եր ուղղված կառավարության դեմ, վոր մի գունդ, մինչև անդամ զին՝ ված, դուրս յեկալ ու գնաց դեպի Մարինսկի պաւար՝ մինիստրներին ձերբակալելու: Բոլորի համար ակներին կերպով պարզ գարձավ, վոր կառավարությունը գիմանալ չի կարող: Խորհուրդները կարող եյին (և պարտավոր եյին) իշխանությունն իրենց ձեռքը վերցնել, առանց վորեւ մեկի ամենավիճակը գիմադրության: Դրա փոխարեն եսերներն ու մենշենիկները պաշտպանեցին կապիտալիստների ընկնող կառավարությանը, եւ ավելի խճեցին իրենց՝ համաձայնությամբ նրա հետ, արբин եւ ավելի ճակատագրական, դեպի հեղափոխության կորուստը տանող քայլեր:

Հեղափոխությունը սովորեցնում է բոլոր դասակարգերին այնպիսի արագությամբ և հիմնավորությամբ, վորովիսին տեսնաված չե սովորական, խաղաղ ժամանակի: Կապիտալիստները, վոր ամենից լավ եյին կաղմակերպված, ամենից փորձաված եյին, դասակարգային կովի ու քաղաքականության գործերում, ուրիշներից ավելի արագ սովորեցին: Տեսնելով, վոր կառավարության գրունն անպահպանելի յե, նրանք գիմեցին մի պրիորի, վորը 1848 թվից հետո մի ամբողջ շաքը տասնամյակների ընթացքում գործադրվել ե այլ յերկրների կապիտալիստների կողմից բանվորներին ճիմարացնելու, բաժանելու և ուժապատ անելու համար: Այդ պրիորն եւ այսպիս կոչված էր այսպիսն՝ միացյալ, բուրժուազիայից և սոցիալիզմի փախուակներից (перебежчиков): Կաղմակած ընդհանուր մինիստրություն:

Այն յերկրներում, վորտեղ ամենից յերկար ժամանակ գոյություն ունի աղասությունն ու զեմոկքատիան՝ հեղափոխական բանվորական բանվորական շարժման կողքին՝ Անդրեյում և

Ֆրանսիայում, կապիտալիստները շատ անդամ և մեծ հաջողությամբ կիրառել են այդ պրիորը: «Սոցիալիստական» առաջնորդները, մտնելով բուրժուազիայի մինիստրության մեջ, անողայման դուրս եյին գալիս կեղծված Փիդուրաներ, տիկնիքներ, չիրմա՝ կապիտալիստների համար, բանվորներին խաբելու դործիք: Առուսաստանի «դևմոկրատական» և հանրապետական» կապիտալիստները դործի գրին նույն այդ պրիորը: Եսերներն ու մենչեիկներն իսկույն թույլ՝ տվին հիմարացնելու իրենց, և փաստ դարձավ մայիսի 6-ի «կոռամբյուն» մինիստրությունը Զերնովի, Շերեթելու և Ընկ մասնակցությամբ:

Եսերական և մենչեիկյան կուսակցությունների հիմարները ցնծում եյին, ինքնասիրահար կերպով լողալով իրենց առաջնորդների մինիստրական փառքի ճառագայթների մեջ: Կապիտալիստները զոհումներից շինում եյին ձեռքերը, ձեռք բերելով ողնականներ ժողովրդի դեմ՝ հանձինս «Յորհուրդների առաջնորդների», խոստում ստանալով նրանցից պաշտպանել «Հարձակողական դործողությունները ճակատում», այսինքն վերսկսել իմակերիալիստական, թալանչիական պատերազմը, վորը համարյա դադարելու վրա յեր: Կապիտալիստները գիտեյին այդ առաջնորդների ամբողջ փրուն անզորությունը, զիտեյին, վոր բուրժուազիայի խոստումները—արտադրության վերահսկողության և նույնիսկ կաթմակերպման վերաբերյալ, խաղաղության քաղաքականության վերաբերյալ և այլն—յերբեք ի կատար չեն ածվելու:

Այդպես ել զուրս յեկավ: Հեղափոխության դարձման յերկրորդ շրջանը, մայիսի 6-ից մինչև հունիսի 9-ը կամ 18-ը, լիովին հաստատեց կապիտալիստների հաշվը, թե ներներին և մենչեիկներին հիմարացնելը դյուրին ե:

Մինչ Պետքանոտին ու Սկորելեմը խարում եյին իրենց և ժողովրդին փարթամ ֆրաղներով, թե կապիտալիստներից կիերցնեն շահույթի 100%-ը, թե նրանց «դիմադրությունը կոտրված ե» և այլն,—կապիտալիստները շարունա-

կում եյին ամրանալ: Այդ ժամանակամիջոցում վոչինչ, ուղղակի վոչինչ չենուարկելեց կապիտալիստներին առաջարկու համար: Սոցիալիստի փախստակ մինիստրները դուրս եյին գալիս խոսող մեքենաներ՝ ճնշված դասակարգերի աշքը կապելու համար, իսկ պետական կառավարման ամբողջ ապարատն իրականում մնում եր բյուրոկրատիայի (չինունիկության) և բուրժուազիայի ձեռքին: Տիրառոչչակ Պալէնարկին, արդյունաբերության մինիստրի ողնականը, այդ ապարատի տիպիկ ներկայացուցիչն եր, վոր արզելակում եր կապիտալիստների դեմ ուղղված ամեն մի միջոցառում: Մինիստրները շաղակերատում եյին—ամեն ինչ մնում եր առաջված ովես:

Մինիստր Շերեթելին առանձնապես եր դործածվում բուրժուազիայի կողմից՝ հեղափոխության դեմ պայքարելու համար: Նրան ուղարկում եյին «խաղաղեցնելու» կրոնշտագում, յերբ այնտեղի հեղափոխականները հասել եյին այնպիսի՝ գերջանղղնության, վոր համարձակվել եյին պաշտոնանկ անել նշանակված կոմիսարին: Բուրժուազիան իր թերթելում սկսեց կեղծության, զրաքարտության և համար անասելի աղմկալի, չարամիտ, կատաղի կամլածանքի անասելի աղմկալի, մեղաղելով նրան «Մուսասամանից անջատվելու» ցանկության մեջ, կրկնելով հազար ու մի գեղանակով այդ և դրա նման անհեթեթություններ, վայեցնելով մանր բուրժուազիային և Փիլիսոփենիկին: Բութ, աւարեկված Փիլիսոփերության ամենատիպիկ ներկայացուցիչ Շերեթելին ամենից ալելի «բարեխիղճ կերպով» եր ընկերում բուրժուական հալածանքի թակարդը, ամենից ալելի ջերմեռանդ եր «ջախճախում և խաղաղացնում» կրոնշտագում, չհասկանալով հակահեղափոխական բուրժուազիայի լակեյի իր զերը: Այնպես եր գուրս գալիս, վոր նա դործիք եր հանդիսանում՝ անցկացնելու այնպիսի «համաձայնություն» հեղափոխական կրոնշտագումի հետ, վոր կոմիսարը կրոնշտագում պարզապես չեր նշանակվում կառավարության կողմից, այլ ընտրվում եր տեղում և հաստավում կառավարության կողմից: Նման վողորմելի կոմպրոմիս-

ների վրա եյին մսխում իրենց ժամանակը սոցիալիզմից բուրժուատիայի կողմը փախուստ տված մինհստրները:

Այնտեղ, ուր մինհստր-բուրժուան չեր կարող հանդես գալ կառավարությունը պաշտպանելու համար, —հեղափոխական բանվորների առաջ կամ Խորհուրդներում, —այստեղ հանդես եր գալիս (այլի ճիշտ՝ այնտեղ ուղարկվում եր բուրժուատիայի կողմից) «սոցիալիստական» մինհստր Սկորեկիք, Ծերեթելին, Զերնովը և այլն և բարեխիղճ կերպով կատարում եր բուրժուական գործը, կաշուց դուրս եր դաւիս, պաշտպանում եր մինհստրությունը, արդար եր դուրս բերում կապիտալիստներին, հիմարացնում եր ժողովրդին, կրկնելով՝ խոստումներ, խոստումներ և խոստումներ, խորհուրդներ տալով՝ սպասել, սպասել և սպասել:

Մինհստր Զերնովն առանձնապես զրազված եր իր բուրժուատական կոլեգաների հետ առևտուր անելով. մինչեւ Հուլիս ամիսը, մինչեւ Հուլիսի 3—4-ի շարժումից հետո այն ժամանակ սկսված «իշխանության» նոր «ճշնաժամը», մինչեւ կազմաների հեռանալը մինհստրությունից, մինհստր Զերնովն ամբողջ ժամանակ զրազված եր ողտակար, շահեկան, խորը ժողովրդական գործով՝ իր բուրժուատական կոլեգաներին «համոզելով», հորդորելով նրանց, վոր համաձայնեն վոնե արդել հողի առուծախի գործարքները: Այդ արդելումն ամենահանդիսավոր կերպով խոստացված եր զյուղացիներին՝ զյուղացիական պատգամավորների համառուստական համագումարում (խորհրդում) Պիտերում: Բայց խոստումն այսպիս ել խոստում մնաց: Զերնովն այնպիս ել չկարողացավ կատարել այն վո'չ մայիսին, վո'չ ել հունիսին, մինչեւ այն ժամանակը, յերբ Հուլիսի 3—4-ի տարերային պոտթկման հեղափոխական ալիքը, վոր զուգափիպեց կազետների հեռանալուն մինհստրությունից, հնարավորություն տվեց կերպել այդ միջոցառումը: Բայց այն ժամանակ ել այդ միջոցառումը սենակ, անզոր դուրս յեկալ՝ լուրջ բարելավումներ մտցնելու կալվածատերների դեմ հողի համար զյուղացիության մղած պայքարի մեջ:

Ֆրոնտում այդ ժամանակ իմպերիալիստական, թալան-

չիական պատերազմի վերանորոգման հակահեղափոխական, իմպերիալիստական խնդիրը, այն խնդիրը, վոր չկարողացավ իրադությամբ և փայլուն կերպով կատարում եր «հեղափոխական վեմուլատօ» կերենսկին, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության նորաթուխ անդամը: Նա արեցած եր նեփական պերճախոսությամբ, նրան խունկ էյին ծխում իմպերիալիստները, վորոնք խաղացնում եյին նրան վորպես մթ չախմատային հետևակ, նրան շողոքորթում էյին, նրան աստվածացնում էյին—այդ բոլորը նրա համար, վոր նա հավատով ու ճշմարտապես ծառացում եր կապիտալիստներին, համոզելով «հեղափոխական զորքերին» համաձայնել վերսկսելու պատերազմը, վոր մղվում եր՝ կասարելու համար ցար Նիկոլայ Ա-ի կողմից Անդրեյի և Թրանսիայի կապիտալիստների հետ կնքված պայմանագրերը, —պատերազմ, վոր մղվում ե, վորպեսզի ուսւ կապիտալիստներն ստանան Կոստանդնուպոլիսն ու Լվովը, Երգրումն ու Տրապեզոնը:

Այսպիս անցավ ուսւական հեղափոխության յերկրորդ շրջանը մայիսի 6-ից մինչեւ հունիսի 9-ը: Հակահեղափոխական բուրժուատիան ուժեղացավ, ամբացավ «սոցիալիստական» մինհստրների հովանու և պաշտպանության տակ, նախապարաստելով հարձակում թե՛ արտաքին թշնամու դեմ, թե՛ ներքին թշնամու, այսինքն հեղափոխական բանվորների դեմ:

Հունիսի 9-ին հեղափոխական բանվորների, բուշելիների կուսակցությունը պատրաստում եր ցույց Պիտերում, վորպեսզի կազմակերպված արտահայտություն տա մասսաների անդուսպ թափով անող դժուհությանն ու զայրությին: Բուրժուատիայի հետ կայացրած համաձայնությունների մեջ իմանալիքած, հարձակման իմպերիալիստական քաղաքականությամբ կաշկանդված՝ եսերական և մենցելիկան առաջնորդները սալսագիահար յեղան, զգալով, վոր կորչում ե իրենց ազդեցությունը մասսաներում: Բնդհանրական վոռնոց բարձրացավ ցույցի դեմ, վոռնոց, վորն այս անզամ միշտ ավորեց հակահեղափոխական կազետներին և մենցելիկան

